մի քեզ բաժին հանեն. այլ ոչ շուն, և ոչ
մարդ քեզ զահմաթ չտան։ Եւ այնպէս
խաբեալ գայլուն՝ գնաց զհետ աղուէսուն։

Եւ յորժամ գնացին, ինքն աղուէսն ե-
կաց 'ի վերայ բլրի միոյ յեզը գեղջն. և յու-
զարկեաց զգայլն 'ի գեղն. թէ գնա՝ առ
զքո ուլոֆայն. և ես զթուղթս պահեմ,
ով որ չտայ նա՝ ես ցուցանեմ, որ տան։

Եւ գայլին հաւատացեալ նմա՝ մինչդեռ.
երթայր յեզը գեղջն. յայնժամ մարդիկն
և շներն 'ի մէջ առեալ կամէին սատակել։
Նակ գայլն ձայնեաց առ աղուէսն, թէ
բեր զպարոնի հուքմն՝ որ տեանուն այս մար
դիկս և հաւատան, որ պարոնի հրամանաւն
եմ եկեալ։ Նակ աղուէսն պատասխանի տը
էալ ասէ, ով գայլ՝ 'ի գեղջդ կարդացող
չկայ՝ լսող չկայ՝ ինչ կայ որ թուղթ բերեմ,
և այնպէս խաբեալ սատակեցին զգայլն։

66 Աղուէսն խաբէ զգայլն, և տայ նմա
թուղթ տանիլ 'ի տանուտէր գեղջն, որ
բերէ նմա կերակուր։ Երբեմն գնաց գայլն

ի դիւղն, թափեցան շունքն 'ի վեր նոր խա-
ծատել և վերաւորել. և փութ փութ արա-
ին։ Եւ իբրև եկն ողորմելի կենօք՝ ասէ
ցնա աղուէսն. ընդէր ոչ ցուցեր զթուղ-
թըն. և նա ասէ, ցուցի՝ բայց հազար շուն
կայ՝ որ զդիր չդիտէ։

Ցուցանէ. թէ մի՛ վնէր, և մի՛ ընկնիր
'ի մէջ բազմաց տգիտաց և աներկիւղաց.
այլ իմաստուք փախիր 'ի դիւռաց և 'ի նոցին
կամարարաց։

67 Աղուէսն եգիտ զպանիր յորոգայթն։
Երթայ առ գայլն և ասէ. ով եղբայր՝ էկ
և առ զպանիրն և կեր, զի ես 'ի պաք եմ.
և գնաց գայլն առնուլ զպանիրն, և անկաւ
որոգայթն 'ի վերզ գայլոյն, և պանիրն 'ի
դուրս թռեաւ։ Եկաւ աղուէսն, և սկսաւ
ուտել. ասէ գայլն, թէ եղբայր՝ այսօր
ուրբաթ է, մի՛ ուտեր որ չի բարկանայ
քեզ աստ։ Ասէ աղուէսն. որոգայթդ 'ի
պարանոց քո անկաւ, և այդ է բարկուելոյ։
Եւ սկսաւ գայլն ցնցոտել յայսկոյս և
յայնկոյս։ Եւ ասէ աղուէսն ցգայլն. ես
այլ շատ ցնցեցի երբ ըմբռնեցայ։ Եւ ա-

սէ գայլն , վայ ինձ զի նեղիմ չարաչարը ։
Զսէ աղուէսն , ոչ եղբայրը , դեռ չես վայ՝
մինչև գայ տէր պանրիդ ։

Յուցանէ . թէ զդաստ լեր , որ չխաբվիս
'ի սատանայէ . զի կապէ զքեզ սատանայ 'ի
մեղս և 'ի հեշտութիւն . յայնժամ ապա ոտաս
վայ անձին քոյ՝ յորժամ գայ քո 'ի դատել
զերկիրը ։

68 Զսէ յառակաց , թէ թագաւոր մի
կայր , որ ունէր իւրն սիրելի զօձ մի . որ
յամէն օր կարմիր դեկան մի բերէր թագա
ւորին . իսկ թագաւորն ունէր մանուկ նոր
ծնեալ , և զմանուկն անուցանէր 'ի վեր բար
ձին . և առեալ զօձն արկանէր զպարանո
ցաւ մանկանն ։ Եւ այնպէս սովորեալ օձն
և մանուկն խաղային 'ի միասին . և այսպէս
ժամանակս ինչ՝ սիրով խաղային առ իրարս ։
Իսկ յորժամ մեծացաւ մանուկն՝ կա
պեալ սուր ընդ մէջս իւր . յաւուր միում
'ի խաղալն իւրեանց՝ հանեալ մանկանն զ
սուրն էհար զտուտ օձին , և ընկէց յեր
կիր ։ Յայնժամ զայրացեալ օձին էհար
զնա՝ և ինքն փախեաւ . և մեռաւ որդի

Իսկ յետ սգոյն և մխիթարուէ, առաքեաց թագաւորն որ գտանեն զօձն, և աղաչէին զնա գալ'ի տեղի բնակուէ իւրոյ։ Եւ ասէ օձն, ով բարի թագաւոր՝ անդէ՛պ է ինձ գալ առ քեզ։ Զի քանի որ Հայիս դու 'ի գերեզման որդւոյ քոյ, և քանի որ Հայիմ ես 'ի տուան իմ, ոչ սրբի մախանքն 'ի սրտից մերոց. ապա այս բարի՛ է, որ Հեռացայ 'ի քէն։

Զուցանէ. թէ ուր նախանձ և մախանք շարժի 'ի վեր քո, դու փախիր անտի, որ սրբի մախանքն այն։ Եւ ինչպես ինչ առնես մարդոյ, փախիր և Հեռացիր յաչից նր, և ապա սրբի սիրտ նր. զի դառն ախտ է մախանքն. և որ կարի երկիւղած է այր, նա կարէ սրբել զսրտին ոխն և զմախանանս։

69 Եր մի անմիտ և յիմար, ունէր դեկան մի։ Եւ զդեկանն, և գնաց 'ի քաղաքն որ գնէ զէշ. շրջեցաւ 'ի քաղաքն՝ և ոչ եգիտ էշ մոյ դահեկանի։ Եւ մտեալ 'ի շուկայն՝ տեսեալ մեծագոյն ձմերուկ մի՝ և ասէ Հիացմամբ, զի՛նչ է այս. և իմացան թէ յիմար է այրն, ասեն թէ այս ինդիկ

իշու ձու է, որ հանէ հնդիկցի էշ մեծագին. և նա խնդալով էտ զդահեկանն՝ և էառ զձմերուկն։ Եւ պնտեաց ծախօղն, թէ վո՞ւ այ պատրաստ տար՝ որ չբեկի և էլեալ փախչի։

Եւ 'ի գնալն դիտաւ ոտքն 'ի քարն, և զերծաւ ձմերուկն 'ի ձեռանէ նը՝. գլորեցաւ 'ի թփերն 'ի ներս, և վազեաց նապատակ մի 'ի դուրս՝ և փախչէր. 'ի հետ վազէր՝ և ձայնէր նապատակին՝ և ասէր։ Ո՛յ էշ հնդկաց՝ վայ ինձ մի՛ փախչիր՝ քուր քուր ողորմիր, և դարձիր առ տէրս։

Յուցանէ. թէ այսպէս յիմարեցաք ամենքեան առ հասարակ, և թափեցաք 'ի մտաց. որ զհետ մտաք սուտ և խաբօղ կենաց աշխարհիս. որ նման հողմոյ փախչի 'ի մէնջ՝ և նման երազոյ պակասի. և ջանամք ըմբռնել զհեշտուն և զմեղս աշխարհիս, և լինիմք ողորմելիք։

70 ( )ձն՝ անտիկնոս եղև հողագործի միոյ, ցի համարակալ. և եկեալ 'ի գետ ինչ՝ առեալ զօձն 'ի ծոց իւր անցանէր ընդ գետն. և օձն այլ ոչ կամեցաւ ելանել 'ի ծոցոյ նը։

Եւ գնացին առ բազումս, և ոչ արարին
դատաստան 'ի մէջ նոցա։ Եւ եկին առ աղ
ուէսն՝ ասեն, արա՛ մեզ դատաստան. իմա՛
ցաւ աղուէսն զպատճառն, ասաց օձին. մինչ
կողման ելելով ոչ կարեմ դատաստան առնել.
էլ 'ի ծոցոյն, և երես ընդ երես զրուցե
ցէք ինձ զբանն ձեր, և դատաստան առնեմ։

Եբրև ելեալ եկն, ասէ աղուէսն հողա
գործին, թէ հա՛ր զնա խթանաւդ՝ որ կայ
'ի ձեռս քո. և նա էհար և սատակեաց զօձն.
և սկսաւ գալարիլ։ Եկեալ աղուէսն ըղոր
դեաց զնա թաթոփն՝ և ասէ, թէ անտիկնոտ
ես, հանցեղ ըղորդ կեցիր։

Յուցանէ. թէ պատրաստ կացիք 'ի նեն
գաւոր մարդոյ. և մի՛ հաշիւ միաւորութի
առնէք ընդ նոսա։ Արձեալ զայս ցուցա
նէ, թէ բարուոք է՝ որ զչար և զնենգաւոր
մարդն ըղորդէ դատաւորն։

71 Եին մի այրի ունէր կով մի, և իւր
խորթն ունէր էշ մի. և զկերակուր կովոյն
զողանայր խորթն և իշոյն տայր։ Եւ կինն
աղաչէր զնա՝ զի մեռցի էշն, և կոչի մե
ռաւ։ Այր կինն, և ասէր. վա՛յ ինձ՝ զի

հակառակ եղև աղօթից իմոց . մի՛ թէ ան-
ո՛չ կարաց ընտրել զէշն և զկուշն 'ի միմեանց։
Յուցանէ . մի՛ աղօթէր ընկերի քում
չար հասանիլ . զի և քեզ պատահի չար։
Դարձեալ ցուցանէ , թէ աղօթեա՛ բարի
մտօք , զի ըստ հակառակս կատարէ ան , երբ-
ո՛չ լինի աղօթքն 'ի կամն այ . քանզի նա
գիտէ զօգուտն անձանց մերոց։

72 Լուիցն եառեա՝ զի ահա գայրն վա-
խճատական առ կենդանիքն ահիւ մեծաւ։
Լսիցց թէ յո՛ւմմէ գայք հանց փախճատա-
կան . և նոքա ասեն թէ 'ի մարդոյ . զի նա
հալածէ զմեզ։

Եւ ահա էկն էհաս մարդ մի . և ասէ
առիւծն ապառնալեօք , թէ դու ես մարդն,
որ նեղես զամ կենդանիսն . և նա ասէ ,
այո՛ ես եմ։ Յայնժամ ասէ առիւծն
ընդ մարդն . եթէ դու ես մարդն , էկ որ
կռուիցիք . զի ես քեզ մնայի։ Ասէ մարդն ,
չունիմ ասա զինչան կռուոյ . ապա թէ գաս
որ կապեմ զքեզ՝ որ չփախչիս , զի ես զա-
ռիւծն պարծ-ենկուտեմ լսել . գնամ և առ-
նում զինչան կռուոյ , և գամ առ քեզ։

Եւ հաւանեցաւ առիւծն որ կապէ ըզ
նա . և կարգեաց մարդն զառիւծն 'ի ծառ
մի . և սկսաւ կաղնի մահակով հարկանել
զնա ։ Եւ ասէ առիւծն , թէ մարդ ես ,
ապա սերտ և անխնայ հար զթիկունս իմ.
զի այս խելացս այսպէս վայելէ ։

Յուցանէ . թէ զօրաւոր մարդիկ խա-
բին 'ի տկարաց և տանջին . և ինքեանք նա-
խատին զանձինս իւրեանց ։ Այնպէս և
յաւուրն դատաստանի դասք անզէղջ մե-
ղաւորացն , արդարացուցանեն զարդար
դատաստանն Աստ , յորժամ 'ի հուրն առաքէ
զնոսա . և ասեն , թէ այս վայելէ մեզ . զի
ընդէր ոչ լսեցաք նմա . և ոչ արարաք զհրա-
մանս և զկամս նորա ։

73 Առիւծն հիւանդացաւ , երէքն գայլին
'ի տես . աղուէսն յամեաց . յայնժամ արջն
չարախօսեաց զնմանէ . և յորժամ եկն
աղուէսն , ասացին զչարախօսուէն արջոյն
բարեկամք նորա ։

Եւ ասէ առիւծն , ոչ բարի գաս գալ
շէլի . ընդէր յամեցար ։ Ասէ աղուէսն ,
մի՛ բարկանար թագաւոր բարի . զի ահա

երդնում՝ ի գլուխ քո , զի աշխատութիւնքդ
շրջեցայ յամ բժշկապետան . և ուսայ հի-
ւանդութիւնքդ քում դեղ։

Եւ ասէ առիւծն , քարի եկիր իմաս-
տուն կենդանի . զի՞նչ է դեղն . և նա ասէ
պիտանի , և դիւրին։ Հրամայեցին բժշկա-
պետքն՝ թէ հանէք զմորթ արջուն տաք
տաք , և արկէք ՝ի վր առիւծոյն . և նա
փութով քաշէ զցաւն ՝ի նմանէ։

Եւ հրամայեաց առիւծն , և կալեալ
զարջն՝ սկսան քարշել զմորթ նր . և նա
վայէր , և փուքս մեծամեծս արձակէր։
Եւ աղուէսն ասէ. այդ յերեսդ քո, և՝ի յե-
րեսս նր որ առ թդուրն զմարդ չարախօսէ .
և հանին զմորթն՝ և սատակեցաւ արջն։

Յուցանէ . թէ չէ պարտ՝ որ մարդ ՝ի
թագաւորաց տուն և՝ի դատաւորաց մտա-
նէ , նա զայլ ոք չարախօսէ , կամ մատնէ .
այլ մարդ զիւր հոգն հոգայ , և զիւր
մեղքն տեսնու առաջև իւր։

74 Ի՝սի յառակաց , թէ ուղղամի՝ ու գայլ
մի՝ և աղուէս մի գնացին ՝ի մէկ ճանապարհ.
գտին բլթի մի հաց , որ անկեալ էր ՝ի ճա-

նա-

նապարհորդաց։ Եւ ասեն ընդ միմեանս,
զի՛նչ արասցուք զայս՝ զի չէ՛ բաւական մեզ
ամենեցուն. ասէ աղուէսն, սա մէկի կէ-
բակուբ է. և որ աւագն է 'ի մէջն՝ և ա-
ւուրքն հին, նա կերիցէ զսա. և հաւանե-
ցան երեքեանն քանին։

Յորցին ցգայլն, սա՛ զթիւն ամաց քոց.
և նա ասէ, ես այն գայլն եմ, որ յաւուրս
Ջրհեղեղին նոյ 'ի տապանն էաւ զիս։

Եւ ասէ աղուէսն, օրհնեալ է ՆԾ, իմ
թոռին ընկերս ես. ես այն աղուէսն եմ՝ որ
ստեղծ զիս ՆԾ, և տարաւ առ ադամ՝ որ
անուանեաց զիս աղուէս։

Եւ տարաւ ուղղն զբերանն, և էաւ
զբլթն, և վերացոյց յօդս. սկսաւ ծամել,
և ասէ. երբ դուք զայդ կու ասէք, այս
սրունքս զոր ես ունիմ՝ չէ յերեկեան օ-
րէն ծնած տղայի։

Եւ յառաջ անուն էդին ըղտուն բա-
գոս, և գայլուն մարկոս, և աղուէսուն
թէոդորոս. և կամեցաւ գայլն ձգտիլ զի
առցէ զհացն յըղտէն. նա զգլուխն էաւ
'ի ծկնամէջն՝ և սկսաւ գայլն կնծկտալ.
իսկ աղուէսն շուրջ անցանէր և ասէր բա-

նիւ բազմաւ։ Բարձրէ բազում, կծկեսայ
մարկոս. շուրջ անցանէ թէոդորոս։

Յուցանէ. թէ չէ՛ պարտ աղքատին ընդ-
մեծատանն ձկտիլ և՝ ի կուրծ մտանել. զի
ոչ կարէ՝ ի դուռս ելանել։ Այլ և ասեն ա-
ռակաբանքն։ Խեցգետինն հետ օձին ձըկ
տեցաւ՝ և կոտորեցաւ։ Եւ թէ՝ գրատ որ
գանձ է բարձեալ՝ ի տղմի ոչ անկանի.
բայց յօրն վերջին լինի արդար իրաւունք։

75 Պապիկն՝ որ է ապուզայն, տվորուն թի
ունի՝ որ զինչ տեսանէ՝ ի մարդն՝ զայն առ-
նէ. եռեռ զի ձկնորսն ձգեաց զուռկանն
՝ի վր ձկանց. և ինքն ևս ձգեաց՝ ըմբռնե-
ցաւ՝ ի նմա։ Եւ ասէ լալով՝ մերաւի ըմ-
բռնեցայ՝ ի հանց տեղի՝ որ չէի հմուտ։

Յուցանէ. թէ ով մարդ որ չես հմուտ՝
մի՛ ձեռն արկաներ՝ և մի՛ ցանկար գործ-ոյ։
Եւ չէ՝ քեզ դէպ թէ մարմնաւորն և թէ
հոգևոր ասասիձան, զի կորուստ լինի քեզ՝
և ոչ շահ։

76 Լաստիկն մեծ բռնութիւն գայ յամուս
նաւթի հրամանաւն ոյ՝ որ ասէ. քանզի
սիրէ որ նոր մնայ. և տատրակն ոչ նստի

յոսան կանանչ՝ եթէ մեռանի ընկեր նր։

Յուցանէ օրինակս. թէ ով մարդիկ սի-
րեցէք զսրբութի և զողջախոհութի. քայց վա-
ղրդէ ծնութեա մտէք յամուսնութի, և մի՛
վան աղտեղութեան։

77 Զդաւն ժողովեաց զձագս իւր՝ և
խրատէր զնոսա՝ և ասէր. ով որդեակք մի՛
լրջիք. պատրա՛ստք եղերուք 'ի մարդկանէ՝
յորժամ խոնարհին առնուլ ինչ յերկրէ։
Զսեն ձագեր նց. ով մայր մեր՝ զի՞նչ արաս
ցուք, թէ յառաջագոյն լինի մարդն առեալ
զքարն 'ի ձեռն իւր. և ասէ մայրն, այժմ
գիտեմ որ ապրելոց էք։

Յուցանէ. թէ պարտ է պատրաստիլ 'ի
հին որոգայթից սատանայի, 'ի պատրա-
նացն, և 'ի նենգութեց նր։

78 Զարգիլն՝ և Ճայեկն՝ և ոպոպն զծ-
ռացեալ հայրն իւրեանց դարմանին՝ սնու-
ցանեն՝ և ծառայեն. մինչև մանկանայ՝ կամ
մեռանի։

Յուցանէ օրինակս այս. թէ պարտ է
մեծարել և դարմանել զծնօղս, և հնազան-
դել։ Ոչ և ոչ ծնողքեաց, պատուէ՛ա

զհայրն քո և զմայրն . որ զծնօղս անարգէ
զնա՝ անարգէ . և զինչ որ 'ի հետ ծնողաց
առնեն , հետ այ են արարեալ ։

79 Լուսէան քաղցեաւ , և եռեաս 'ի հոր
մի փուտ քար , կարծեց թէ պանիր է . ան-
կաւ 'ի ներքս , և սկսաւ ուտել . և ասէ ,
վայ ինձ՝ զի ոչ համ ունի և ոչ հոտ ։

Յուցանէ . թէ ով մարդ մի անկանիր 'ի
փուտ մեղս . զի անշահ իրք է մեղքն , և
անօգուտ . զի յետոյ շատ ապաշաւեաս ։

80 Լուսէան 'ի գետն անկաւ՝ և լինէր
գետատար . խոստացաւ այ մարդան մի խուռնկ
զի հանցէ զնա 'ի գետէն . և զերծեալ 'ի
գետէն՝ և սկսաւ 'ի ժխտել . և մոռացաւ
զուխտն զոր եդ այ ։ Խաղայր , և խայ-
տայր յեզը գետոյն , և ասէր . թէ ահ ինչ
կարիս ունի 'ի ծուխ խնկին որ յօդս ցնդի ։
Եւ ահա շարժեցաւ դարային գետիւն , և
սկսաւ գնալ 'ի վեր նր . և նա լալով գո-
չեաց , և ասէ . ով ահ ոչ իմացար՝ զի ես 'ի
խնդիր եալ այ մարդանէն որ խուռնկն բերեմ ,
զոր ուխտեցի քեզ ։

Յուցանէ . թէ ոչ է պարտ մոռանալ

զուխան՝ զոր ուխտեաց որ ՅՍ 'ի նեղութեանէ
իւրում. Նա և զՀանդերձեալ նեղութիւնն
մի՛ մոռանար։

81 Զուշէս մի քաղցեաւ, եգիտ զսառն
և զպաղ։ ցանկացաւ 'ի ձմեռնային աւուրն,
սկսաւ ուտել զնա։ Յետ ասէ վայ ինձ, զի
ահագին է գլգլունս և աղաղակս 'ի գլուխս
և յատամունս իմ, և 'ի փորս քնաւ ինչ ոչ
իշանէ։

Յուցանէ. եթէ փառք և մեծութի աշ-
խարհիս զերդ երազ է. և միայն զաղա-
զակն ունին և զբաղումն. և յետոյ ոչ է-
րևի ուրեք. զի սուտ է և անցաւոր և
խաբօղ։

82 Զուշէսն եգիտ զրեհ մի, և կարծեաց
թէ այս է պատմուճանն աղամայ զոր կո-
ղոյս, զի գրեալ է թէ լուսաւոր էր. և զգե-
ցաւ զնա ձմեռնային ժամն. Նա պատռեցաւ
և տանջեր զնա՝ և մահր։ Յետ հանեալ կանգ-
նեաց զնա, և սկսաւ ջուր արկանել 'ի նմա,
զի կարծեաց թէ ջրոյ ամանն է սա. և ամե-
նևին ոչ կարէր լցուցանել։

Այնժամ բարկացեալ էարկ զնա 'ի խորա

Տուվուն, և ասէ. Երթ 'ի կորուստ, զի կա-
ղի անպիտան իր էս. ոչ եղեր զդեստ ամ-
ուան, և ոչ ձմերոյնոց. և ոչ ամանն ջրոց. ապա
կարծեմ թէ փոր էս դու որովայնամոլ և
աղբեցօղ մարդոյ՝ որ անկուշտ լինի։

Յուցանէ. թէ այսպէս անօգուտ է
փառք աշխարհիս. զի ոչ է աստ պիտանա-
ցու՝ և ոչ անդ. աստ մահն խաբէ, և անդ
նոր արարածք լինելոց է։

83 Եշմի էառ զաւանակն իւր, և գնաց
արածել 'ի մարգ մի ցանկալի յանմարդա-
բնակ տեղի. և ահա գայ էշ մի որձ, և հո-
տոտեցաւ 'ի յետոյ 'ի յամօթ նր։ Եւ նա
կէց էհար զօրութեանն. և էհար զխամեկ
նր, և ջախջախեաց. նա փախեաւ որձ էշն
և գնաց անտի։

Եւ ասէ քուռակն ցաղով, վայ ինձ մայր
իմ, զի տառապանք են աստ վասն, և քա-
զում երկիւղ կայ 'ի գազանաց. ասա՛ ինձ՝
ընդէր հարեր և վիրաւորեցեր զփառաւո-
ղագոյն էշն, որ էկն առ մեզ։ Ասէ մայրն,
ով որդեակ իմ՝ մի՛ երկնչիր զի չէ յամե-
լոց. քանզի յայն տեղին հոտոտաց, և զայն

հուն էաւ . որ թէ մինչ 'ի ներքին հիդիկքն
երթայ՝ և կամ 'ի խորասան , փուրթայ դառ-
նալ առ մեզ ։

Յուցանէ . թէ որ շնայ , կամ զրկէ , կամ
գողանայ , կամ զայլ մեղս գործէ , ոչ կարէ
դիւրաւ զերծանիլ 'ի մեղաց . զի ցանկուն
և հոտ մեղացն կապէ զնա , և քարշէ ոչ
զշուն տոռամբ ։ Օ 'ի օձէ մեղքն՝ 'ի ծակն
շուտ մտանէ . և ոչ կարէ ոք յետս քարշել
զնա՝ զի խորին ընդդէմ է ։

84 Ոչ մի անկաւ 'ի գետն , և 'ի խեղդիլն
թռքեց . և գայր թրիքն 'ի վր ջրոցն , և յա-
ռաջեաց քան զէշն ։ Եւ ասէ էշն , այ էր՝
'ի յորովայնէս դեռ ելեր . ասա՛ ինձ թէ
զլոզդ ո՞ւր ուսար , որ քան զիս յառաջ
քայլես ։

Յուցանէ . թէ կարի անպատշաճ է՝
յորժամ տղայք խրատ տան ծերոց , և տը
գէտք գիտնականաց ։

85 Օ էշն մեծարեցին և կոչեցին 'ի հար-
սանիս որդւոյ թագաւորին . և նա ասէ ոչ
փողահար եմ , և ոչ խաղացող . ապա գի-
տեմ որ կամ փայտ պիտանայ կրել և կամ
ջուր՝ զի իմ քանն այն է ։

Յուցանէ. յորժամ կոչեն զքեզ 'ի քան կամ'ի գործ, որ քեզ անդէպ է և աննման, և 'ի վերքան զկարողութի՛ քո, գիտացի՛ր որ քեզ տնազ առնեն։

86 Զուն աւետիս եղուն, թէ ցնծա՛ և ուրախ լեր, և տո՛ւր մեզ օժիտս, զի թոռն եղաւ քեզ։ Եւ նա ասէ՝ վա՛յ ինձ բարեկամիմ. զի թէ հարիւր թոռն լինի ինձ յերանաց իմոց, զծանրութի՛ բեռանց իմոց ո՛չ թեթևացուցանէ 'ի թիկանց իմոց։

Յուցանէ. թէ ամոթ ընդ անձին պարտի համարս տալ, և զբեռն մեղաց իւրոց ինքն բառնալ։ Դարձեալ ցուցանէ, մի՛ վստահանար յորդիս քո՝ և մի՛ յորդիս որդւոց քոց, զի ո՛չ քաւեն զմեղս քո. այլ դուք Ջանա՛ քանի որ կարես, զղջանալ և ապաշխարել արտասու�։

87 Զ'անապարհորդ մի հանդիպաւ յաղբեր մի և գնաց. և անդ մոռացաւ հարիւր դեկան. և նոյն ժամայն գայ ոմն անցանել զանապարհաւն, էառ զգանձն, և գնաց 'ի լեառն։ Եւ նա յիշեաց զգանձն, և փութով դարձաւ. և ահա այլ ոմն գայր զանա-

նա-

նապարհաւն. կալաւ զնա, և եկն 'ի տեղին
և ասէ՝ տուր զգանձն զոր տար Թողի. զի
այլ ոք ոչ է եկեալ ընդ այս։ Եւ նա երդ-
նոյր դառն և ասէր՝ Թէ ես չեմ տեսեալ։
Եւ նա տարաւ զնա 'ի դատաւորն արքու-
նի, չարչարեալ ստանին զնա 'ի նոյն խոր-
հուրդ։

88 Գայր վաճառական մի, 'ի քաղաք մի
հանգեաւ, և յարեաւ շրջէր 'ի քաղաքն.
եկն 'ի վաճառանոցն, և էհաս նմա պէտք
մարմնոյ արտաքին։ Եւ էր ջրատուն մի մեր-
ձ 'ի վաճառան. և նա եմուտ 'ի նմա վճարեաց
զիւր պէտսն։ Եւ գողն գայր ծածկաբար
զհետ նոր վ՚ս գանձին, զոր ունէր կապեալ
'ի մէջն. փութով 'ի հետ մտաւ՝ և էհատ
զգլուխ վաճառականին. էառ զգանձն և
գնաց. զի շատ էր աղմուկն և՝ ոչ իմացաւ ոք։
Նոյն ժամայն մատդրծն եմուտ 'ի ջուր
տուն 'ի վճարել զպէտս մարմնոյն. և զայն
տեսեալ վայ գոչեաց ընդ անմեղուն իւրոյ։
Եւ լուեալ մարդիկ.քն կուտեցան 'ի վերայ
նոր. տեսին զնա զի խուզայր, և թաւալէր
յարիւնն, զի նոր էր զենեալ. տեսանէին

զդանակն արիւնաթաթախ, և զձեռս մաս-
գործին. ապանաւ և նա, զի ամենեցուն
միտք վկայէր թէ նա ապան։

Ա. Յս երկուս առակս մի խորհուրդ և
մի միտք ունին, և շատք խաբին, և այլ ընդ
այլոց համարին զնա։ Բայց այս է կատա-
րեալ միտքն. զի շատ արդար մարդիկ դա-
տին և մեռանին անիրաւ և ընդ վայր. դա-
տաւորն գիտէ 'ի միտս իւր՝ և այլք թէ
ուղիղ դատեցաք՝ զոր ասէր։ Նա չէ
զարմացումն, զի ոչ է հրեշտակ դատա-
ւորն, և ոչ մարդարէ, որ զիտորն և զծա-
ծուկն գիտացէ։ Այլ շատ պարտի քննել
դատաւորն զբանն և զգնեան, և համ-
բերել բազումաւուրս, զի սակաւ սակաւ
յայտնի ճշմարտուն։ Այս և միակնի դա-
տաստան չէ՝ պարտ առնել, զի շատ ինչս
լինի անտի. նա և կաշառօք չէ՝ պարտ թիւ-
րել զիրաւունս, զի անթողելի մեղք է ա-
ռաջի աստուծոյ։

89 Ուսին խաւարի՝ և թափեալ պա-
կասի լոյս նոր. և գայ 'ի դէպ արեգականն,
և առնու 'ի նմանէ կրկին զլոյս իւր։

Յուցանէ օրինակս, ոչ մարդ մեղաւոր՝ եթէ խաւարեցաւ լոյս աչք աւազանին որ կայր 'ի հոգի քո, և պակասեցաւ 'ի քէն շը նորհքն 'ի ձրի, մի՛ երկմտիր թերահաւատութիւնք. այլ յուսա 'ի քո հաստատուն հաւատով. և դիմէ առ նա զղջմամբ և արտասուօք. և նա ծագէ 'ի հոգի քո 'ի լուսոյ իւրոյ. և սրբէ զանօրէնութիւնս քո ողորմութեամբն իւրով։

90 'Ամենեն չորանայ տերև ծառոց, և քոյսք անզարդին. իսկ 'ի գարնանային ժամանակն կրկին զարդարին և պայծառանան։

Յուցանէ քարի և լուսաւոր օրինակս. ոչ մարդ եթէ ձմեռն մեղաց էկն 'ի վր քո, և պաղեցոյց զքեզ չար հողմն հիւսիսական մեղացն սատանայի, և հանց գոյն տերևացն թափեցաւ 'ի քէն գեղեցկութի քո. մի՛ անյուսիր ոչ ողորմելի. այլ էրթ սրտի մտօք առ հոգևոր գարունն քո, որ կոչէ զքեզ քաղցրութիւնք. և նա լուսանայ շնորհօքն իւրովք զայանցանս քո. և նորոգէ զքեզ յառաջին պայծառութիւն քո։

91 Խոզն, և ըզէշն, և կան այլ կենդա-
նիք՝ որ աղբակերք են, և հոտ գարշութեան
կեանք թուի նոցա։ Ա՛յլ ինձ, զի ցուցանէ
օրինակս, թէ ամ մեղաւոր անզեղջ՝ զաղբ և
զշարաւ մեղացն ուտէ և պարարտանայ. և
այն քաղցր է 'ի քիմս նոցա։

92 Անմարդաբնակ լեառն մի՝ կայ մըր-
ջիւն մի մեծագոյն քան զոչխարս. և գայ ա-
ռիւծն խաւռնակի ընդ նմա, և ծնանի նոցա
զաւակ. որ է կէս անձինն առիւծ, և կէսն
մրջիւն։ Եւ յորժամ ծնանի, դիմէ առ
մայրն զի կերիցէ հունդ, և ոչ կարէ ու-
տել՝ զի հայրն մնակերտ է. և դիմէ առ
հայրն զի կերիցէ միս, և ոչ կարէ ուտել՝
զի մայրն հնդակերտ է. այսպէս երթայ և
գայ առ հայրն և մայրն, և 'ի սովոյն սա-
տակի։

Ա՛յլ ողորմելի անձն իմ՝ քանզի այս-
պէս ցուցանէ առակս զդաս անզեղջ մե-
ղաւորացն. զի ծննդեամբն նոր աւազանին՝
են այ արարչութեան. և ծնանի սատանայ
մեղօք և անօրէնութեամբ։ Դիմեն առ նա՝ զի
հաւատան որ կայ. և ոչ կարեն ուտել զկե-

բակուրն այ՝ զսրբութիւն և զապաշխարութիւն
զգործս քարեաց՝ զի մեղաք կապեալք են 'ի
սատանայէ. և ոչ կարեն ուրանալ զայծ, զի
բնաւորեալ գիտեն որ այծ կայ՝ և յարութիւն։

Ա. Յապէս են կապեալք յայծ հաւատով.
և են կապեալ 'ի սատանայ չար գործօք. ոչ
կարեն առնուլ քաժին 'ի սատանայէ, և ոչ
յայ։ Ա. Յապէս երթան առ այծ հաւատով.
և առ սատանայ մեղօք և հեշտասիրութիւնք.
և կան երկմիտ և անհաստատ. և գայ մահն
յանկարծակի՝ և հանէ զնոսա յաշխարհէս
քաժին դժոխոց։

93 Ա. Յր մի հողագործ շինեաց ականատս
բազումս, և էարկ 'ի վաստակն իւր վասն
թռչնոց. զի գային կռունկք և սագք քա-
ղէին զբակլայն և զսիսեռն նր։ Ա. Դաւ-
տուն գնաց տեսանել զակնատսն. եռեա զի
անկեալք էին բազումք 'ի սագից և 'ի կռըն
կաց յորոգայթսն. և սկսաւ մահակօք ըն-
պանանել զնոսա։

Ա. Բագիլ մի գտաւ յակնատսն. ասէ ալ-
լով արագիլն առ հողագործն. վա՜յ այ մի՛
սպանաներ զիս, զի ոչ եմ ես կռունկն և ոչ

սաղ, և ոչ զսխեռն ուտեմ և ոչ զբակլայ.
այլ բարեկամ եմ քեզ, և քաղեմ զնա
ժիժմունս յանդաստանաց քոց։ Ասէ հողա
գործն, որովհետև գտայ զքեզ ընդ թշնա
միան իմ, ընդ դոսա մեռցիս. և ապան զնա։

Յուցանէ. թէ որ բարեկամ լինի և
օգնական, և միաւորեալ ընդ չարագործ-
սին, ընդ նա տանջելոց է 'ի հուրն անշէջ.
ոգի և գրեալ է՝ թէ զգողն և զգողակիցն՝
զբռոզն և զկաւատն՝ և զկախարդն՝ միապէս
տանջէ ած 'ի դժոխան։

94 Այր մի էհատ զլեզու հորթուն դը-
րացեալ իւրոյ գաղտաբար. և յորժամ մե-
ծացաւ և եղև էզն, գնաց այրն առ թագա-
ւորն, և ասէ. թէ իմ է էզն 'ի տղայուէ.
և եկեալ անուցիչ եղինն՝ մտան իրաւունք։
Եւ նա ասէ՝ հորթուն լեզուն հատած էր
զոր կորուսի. բացին զբերան էզին, տեսին
զնշանն, և էառ զէզն։

Եւ 'ի միւս օրն լծեաց, և սկսաւ վա-
րել. և խրատան եզինքն, և նա անկաւ առա-
ջի խուփոյն՝ և ցցուէ եցաւ 'ի վերայ նոր. անցաւ
թափ ընդ թափ. և էզն էառ զնա, և եկն

'ի դուռն ան իւրոյ • ընդ առաջ ելին քա-
զուն և ասէին, գայ սիրասն և քեզի զհա-
ւրն։

Ցուցանէ • թէ շատ արդար իրաւունք
առնէ ած յառաջ քան զդատաստանն, որ
իմանան մարդիկ թէ կայ հատուցումն ամ
գործոց։

95 Այր մի աղքատ՝ խորովէր միս սակաւ
յանապատին իւրում • և արծուէ մի յան-
կարծակի եկն 'ի վերուստ՝ էառ զմիսն և
վերացաւ։ Իսկ աղքատն խնամաբարոյ էր՝
անկաւ 'ի վեր մորենոյն ձայնեաց ասելով •
թէ մանուկ ես և ունիս կարողութի՝ դու
նիստ և կեր։ Եւ ասեն մարդիկք՝ թէ տա-
ւրաւ արծուէն զմիսն 'ի քոյնն՝ և էդ առա-
ջն ձագուց իւրոց և գնաց • և կայր կայծ
մի փակած 'ի մեան, այրեաց զքոյնն և զձա-
գեր արծուէոյն։

Ցուցանէ • թէ շատ արդար իրաւունք
առնէ ած • զի որ զերկէ զմարդն յանմե-
ղուց, նա զմեղքն հետ զերկանացն 'ի յինքն
առնու՝ ոչ ասէ սողոմոն։ Այս է որ այրէ
զնա 'ի հուրն անշէջ • ըստ այնմ՝ թէ առնէ
որ իրաւունս ամ զերկէլոց։

96 Լ. ողովեցան թռչունքն, և ընտրեցին զսիրամարդն վա՛ գեղեցկուե՛ իւրոյ, և ա՜ ղարին իւրեանց թագաւոր։ Այլ աղաւնին և ասէ, ո՛վ բարի թագաւոր՝ եթէ նեղին զմեզ արծո՛ւքն՝ և դու զինչ կարես առ նել մեզ զօգնութիւն։

Յուցանէ. թէ թագաւորին ոչ միայն գեղեցկութի՛ պիտոյ է. այլ և քաջութի՛ և քաջամտութիւն իմաստութի՛ յա՛մ կողմանց։

97 Որ մեծատուն մի՛, և ունէր ժառանգ ման իւրոյ զքեռորդին իւր. Հիւանդա՜ ցաւ, և կոչեաց զժառանգն զի խրատեսցէ զնա. և նա եկեալ նստաւ՝ էած զգլուխն ի՛ ծոց իւր։

Եւ ասէ մեծատունն, ո՛վ որդեակ՝ Ջանա՛ ի՛ բարի, և մի՛ հեշտանար ի՛ սուտ կեանքս յայս՝ զի անցաւոր է. անմոռաց յիշեա՛ զօրն ահագին, և զժամ մահուն դատաստանն մի՛ մոռանար. խոնարհ և անոխակալ լեր. և զմեզս քո մի՛ պահեր առ քեզ։ Ջանձրա՜ ցաւ յասելն. ասէ ցնա, թէ ո՛րդեակ՝ լսէ՜ ցեր զոր ասացի քեզ, և կամ՝ի միտ առեր։

Եւ ասէ ցքեռին՝ թէ զինչ հրամայե՜

ցեր։ Պատդու լսէ՝ և ես պատմեմ քեզ գործ մի զարմանալի. զի ահա 'ի փորս իմ կան երակք տան և երկու, և ամէնն 'ի պորտս գայ և երթայ. և լջեալ միաբանին 'ի ծայծուկ մարմնոյ։

Նա ասէ քեռին, վայ քեզ ժառանգ անպիտան և հայրենակորոյս. զի ես քեզ զօրէն ես քարոզեմ, իսկ դու զերակ պորտոյդ 'ի թիւ արկանես. յայսմհետէ էլցես դու 'ի ժառանգութէ իմմէ։

Ցուցանէ. թէ այսպէս անմտացաք ամ մարդիկս, և 'ի քաց թողաք զխրատն այ, և զսպառնալիսն դժոխոց. և թաղեցաք ըզմիտս մեր 'ի ծոցս մեղաց։ Նա զայն խորհիմք անդադար՝ թէ ո՞ւր զրկեմք, կամ ո՞ւր արբենամք՝ և այլ մեղք գործեմք. այս են երակք պորտոյս. այս հանէ զմեզ յայ ժառանգութէն՝ և ողորմելի առնէ։

98 Այս մի հաւատաւոր կայր 'ի քաղաքի մի, հպարտանայր 'ի միտս իւր 'ի դիւթին զօրութէ. և էլեալ 'ի հրապարակս քաղաքին ձայնէր և ասէր։ Սեցէք ազգք և ազինք ամ, զի ահ միայն է յերկինս անարատ և

աբ , և էս յերկրի . և այլքդ խոտորեցայք յաստուծոյ ։

Եւ անկաւ 'ի շնութիւն . իբրև յղացաւ աղէկն , ել 'ի բարձրագոյն տեղ մի , գոչեաց ասելով , թէ լսեցէ՛ք ազգ մարդկան , զի ահա միայն մնաց անմեղ և անարատ . զի էս 'ի պատն վազեցի , և անկեալ խորտակեցայ ։

Յուցանէ . թէ որ հպարտանայ նա դևն այսպիսի գործէ . թէ տեսանէս որ մարդ հպարտանայ 'ի վր ընկերին , և խօսի հպարտութիւն , և զանձն իւր աբ համարի , յայն դու ասա զառակս զայս ։

99 Ահա երկու անդ ինկնոսք երթային 'ի վաճառ . մինն իմացաւ որ չարակնութիւն հայէր 'ի նա , վ՚ սակաւ գանձուն զոր ունէր . և հասին նոքա 'ի վայրաբնակ տեղի մի՝ և նա երկնչէր ։

Իբրև 'ի քուն եղին , յարեաւ գաղտ ընկերէն , եդ զփայտ 'ի տեղին իւր ուր պահեալ էր . և դրդուեաց 'ի տեղւոջ գրելն . և ծածկեաց կարպետով . և ինքն զատ նստաւ ։

'Ի մէջ գիշերի յարեաւ ընկերն՝ և էտ

առ. մեծ վէմմ, և էհար 'ի վրայ դդման, գիտէր թէ գլուխն էր. և դդումն կոտորեցաւ ձայթմամբ։ Եւ ձայնեաց ընկերն՝ և ասէ. թէ ահա անտիկնոս զհաւատ քո 'ի դդումն փորձեցի. և ինքն փախեաւ 'ի նմանէ։

Յուցանէ. թէ յամարտ ուծ օգնականն է. բայց պատրաստ կենալն աղեկ է. զի ուծ զիմաստութիւն ետ 'ի սիրտ մարդկան։ Եւ դարձեալ ցուցանէ, զմարդ զոր փորձեալ էս 'ի սակաւ իրս, 'ի քան և 'ի գործ պնատաս կար և նենգաւոր. դու զանձն քո մի՛ վստահանայր 'ի նա։

100 Եւ մնաց այր մի առ թագաւորն՝ և ետ հարիւր դահեկան, և գնեց զամխեղն՝ որք էին 'ի նոր գաւառին, զի նմա տացէն զհարկն։ Եւ իբրև էլ 'ի թագաւորէն, ետես զայր մի ճաղատ՝ միականի՝ և քթատ, խուլ՝ և քարշ, ձեռնատ՝ ձուքանկ՝ և մի ոտն կտրած։

Դարձաւ առ թագաւորն՝ և ասէ. ով բարի թագաւոր՝ զամ գաւառս խեղճաց զամ։ Հրամայեաց թագաւորն քե-

ել զնա. իբրև ետես զնա զարմացաւ. ասէ փառք ՅՍ։

Յուցանէ. թէ որ ունի խեղութիւն 'ի հոգին, որ է մեղքն. նա գնեալ է զնա սատանայ՝ և իւրն հարկատու արարեալ խաբէութիւնքն։ Իսկ որ բազում մեղս ունի յանձն իւր. զոխակալութի, զհայհոյութի, զշնութիւն, զրկանք, և զարբեցութի, և զայլ մեղս. այսինքն, բազում խեղութի 'ի հոգին, և ոչ դիմէ առ քՍ, և ոչ զղջանայ. նա հաստատուն ծառայ է սատանայի։

101 Որ իւծն, գայլն, և աղուէսն եղեն եղբարք. ելեալ 'ի յորս գաւին երիս ոչխարս։ Իսկ 'ի ժամ ճաշուն ասէ առիւծն ընդ գայլն. թէ բաժանեա՛ ոչխարդ 'ի վերայ մեր. կամէր փորձել զգայլն։ Իսկ ասէ գայլն, խոյդ քեզ՝ և մնաքիս ինձ՝ և գառնս աղուէսուն. և առիւծն էզարկ թաթիւնն զկատաւ փրն գայլուն, որ երկու աչքն կոկովեցաւ. նա նստաւ 'ի վերայ նորա։

Իսկ ասէ ել աղուէսն, թէ բաժանեա՛ զոչ խարդ 'ի վերայ մեր. ասէ աղուէսն. ով քարի թագաւոր և յաղթող՝ զայս ոչ է բաժանել։

նեալ. խոյդ քեզ ճաշ, և մաքիդ հրամէնք, և գառնդ ընթրիս։ Այսէ առիւծն. ով գերի աղուէսուկ՝ ով ուսոյց քեզ զայրդար դատաստանդ զոր արարեր։ Այսէ աղուէսն, թէ գայլուն աչուքին ուսոյց ինձ, որ արտաքս կոկովեցաւ։

Յուցանէ. թէ քազուամ չարագործք խրատին՝ և թողուն զչարն, յորժամ թագաւորք և իշխանք կախեն և խրատեն ըզգողն և զապանօղն։ Այնպէս շատ մեղաւորք զղջանան և էրթան ապաշխարուք, յորժամ լսեն թէ մեծատուք պապակին 'ի հուրն. և յիմար կուսանքն լացին անշահ, և 'ի հուրն անշէջ առաքեցան։

102 Այն էգիտ զէշ մի գէր, կամեցաւ ուտել զնա։ Այսէ էշն ընդ գայլն, աղաչեմ զքեզ վե՛ր այ. հան զայս խոցս 'ի յիմարատէս՝ և ապա կեր զիս. զի ՝ծ է ա 'ի ձեռս քո զնա։ Զանգի քեռեռ չար հասաւ 'ի յոտս իմ՝ և տանջէ զիս։

Ընդեալ գայլն յետև իշուն՝ զի հանցէ զքեռեն. և էշն ամ զօրուքն կիլց էհար՝ և էզարկ զքերան գայլուն, և կոտրեաց

զկզակն . և ինքն փախեաւ։ Պ՝այլն նատեալ
լայր և արտասուէր , թէ արժանի եմ ես
այս չարիս՝ որ եկն իմ անձինս վրայ . զի ես
մատգործ էի , զիս քայտարս ոչ արար ։

Յուցանէ . թէ շատք լան և ապաշաւեն՝
որք ձեռնարկեն 'ի գործ և յարուցեսցեն
ինչ՝ զոր չեն ուսեալ , և չէ իւրեանցն յար-
մար ։

103 Պ՝ղուէսն էաւ կաքաւ մի՝ և կամէր
ուսել զնա . ասէ կաքաւն , օրհնեալ է ած՝
որ կոչեաց զիս յարքայութիւն , և զերծոյց
զիս 'ի յայս չար ժամանակէս ։ Պ՝ապա դու
աղուէս գոհացիր զայ՝ և ապա կէր զիս .
քեզ վարձք է ։

Եւ աղուէսն կկոչեցաւ , բացեալ զբե-
րանն հայեցաւ յերկինս՝ և ասէ . գոհանամ
զքէն ած , որ պատրաստեցեր մեզ զսեղան
բարութիւն ։ Եւ կաքաւն զերծաւ 'ի բե-
րանոյն , և թռեաւ . և ասէ կաքաւն , առաջ
ուսել պիտի , և ապա գոհանալ զած ։

Յուցանէ . թէ զխոստացեալ իրքն մի՝
համարիր քեզ . զի շատք ասեն՝ և ոչ առ-
նեն . մարդոյ շնորհակալ մի՝ լինիր , մինչև

չառնուս զնրան. և թէ ջուր տան, դու 'ի ժամն 'ի գոգդ առ։

104 Լ։ զու�էան զչնան 'ի քերան էառ՝ և կամէր ուտել զնա. ասէ չնան ընդ աղուէսն, շատ աւաղ թէ ուտես զիս. զի ժամ է ինձ որ ածէի մարգարիտ մի ահագին քան զՋալամու ձու։ Լ։ թէ թողուս զիս, ես ածեմ զմարգարիտն, և լինի քեզ. և ապա կէր զիս. երդնումն որ գամ 'ի կամն քո։

Լ։ երբև եթող զնա, թռեաւ չնան, և նստաւ 'ի բարձրագոյն ճիւղ մի։ Լ։ սէ աղուէսն. ապա զոր ասացեր, և եկ 'ի կամս իմ։ Լ։ սէ չնան ընդ աղուէսն. ապա քեզ նման անմիտ լինիմ, թէ այլ գամ 'ի կամն քո։ Լ։ դու ընդէր հաւատացեր. թէ ես կարի սակաւ մարմնովս՝ այնպէս մեծ մարգարիտ կարէի բերել քեզ։

Լ։ ապա ասէ տամ քեզ խրատ՝ որ շատ օգուտ լինի քեզ. անդէպ բանից մի՛ հաւատար. ընդ խախտուտ որմով մի ննջեր. 'ի շնացող ծերէ, 'ի հպարտ աղքատէ, և 'ի ստախօս իշխանէ, և յառաջնորդէ 'ի բաց փախիր։

Բ։սկ աղուսէանն . ահա դատելոց է լոշ
քեզ ասծ՝ զի ստեցեր ինձ ։ Բ։սկ չիտն .
սուտ կայ որ մեղք չէ ասել . 'ի մեղաց և 'ի
մահուանէ և յոլոգայթէ ապրիլ , կամ
զմարդ փրկել ։

Բ։սկ աղուսէանն՝ թէ ընդդէմ է գրեալ
մարգարէն դաւիթ . թէ կորուսանէ Տէր
զայնոսիկ՝ որք խօսին սուտ ։ Բ։սկ չիտն, թէ
ժամանակն գիտէ՝ և ապատճառն . քանզի
յորժամ սուտ խօսիս 'ի մեղաց և վշտաց
փրկիս , և փրկես զմարդն . նա ասծ ոչ բարի
կանայ . և թէ սուտ խօսիս, և զմարդ գայ
թագղեցուցանես , նա մեծ չարն է ։ Բ։պատ
դաւիթ խաղաց 'ի յափսթեր և շրեթաս
վեցաւ . և կարծիս եւ թէ մաղասկաթ է՝
կամ գիւտարը , և փրկեցաւ 'ի մահուանէ ։

105 ։ Դրեց մի ասորի , իմաստուն և բարի՝
և այր՝ մի հայ կռուէին ընդ իրեար վասն
հաշուոյ ինչ ։ Բ։սկ այրն , թէ շահն այն 'ի
քո երեսդ և'ի քո երեսուն և երկու ասա
մունդ ։ Բ։ և երէցն զարմացաւ , գնաց շուտ
մի 'ի տունն՝ ասէ ընդ իրեցկինն իւր . թէ
քանի են ասամունքս իմ ։ Բ։ և կինն թուէաց՝

և ասէ. երեսուն և երկու են ատուգաղէս։
Եւ նա գայ առ այն մարդն՝ և ասէ. ուստի
գիտացեր զմիւսն ատամանց իմոց, կամ ո՞վ
ասաց քեզ. և նա ասէ, թէ՝ յիմ ատամանցս
գիտեմ զքոյդ, և ասացի։

Ուրակս ցուցանէ, թէ փորձով անձին
պարտիմք կարեկից լինել ընկերին. զի ոչ
մեզ կամիմք զի արասցեն այլք, նոյնպէս և
մեք պարտիմք այլոց առնել։

106 Ուիւծն հիւանդացաւ՝ և ուղարկեաց բժշկաց խնդիր, թերևս արասցեն դեղ ցաւոյն։ Եւ եկեալ բժշկապետացն, և ասեն ընդ առիւծն. թէ քո ցաւոյդ այլ դեղ չկայ՝ քան որ զինշուն ակռանջան կարեն, և զսիրտն հանեն, և տան որ ուտես, և աղեկնաս։

Ասէ առիւծն ընդ աղուէսն. եթէ կարես էշ մի գտանել և բերել։ Եւ ասէ աղուէսն. խիստ շուտով կատարեմ զհրամանս քո. քանզի ունիմ ինձ եղբայր էշ մի, և է խիստ սատակեալ դէր. և է յայս անտուն հովիտս, և արածի։ Եւ գնաց աղուէսն առէշն, և ասէ. ո՛ բարի և հեզ էշ, այժմ

գիտացիր՝ զի մեծ փառաց կամիմ հասու-
ցանել զքեզ։ Բանզի առիւծն որ է թա-
գաւոր գազանաց՝ հիւանդացեալ է, և մօտ
'ի մահ է. և ուզէ որ տեսանէ զքեզ, և
զթագաւորութիւն քեզ տայ։

Եւ հաւատաց էշն խաբողական բանից,
և եկն առ առիւծն. և 'ի համբուրել զա-
ռիւծն, առիւծն զբերանն եբաց՝ և կա-
մէր խեղդել զէշն. և իշուն փրծեալ փա-
խեաւ։

Եւ հասեալ աղուէսն իշուն՝ և ասէ. ո՛
անմիտ՝ ընդէ՞ր փախեար. և ասէ, եթէ 'ի
համբուրելն կսկծեցայց զիս։ Եւ ասէ աղ-
ուէսն. եթէ այն 'ի սատակ սիրոյն էր, դար-
ձիր, և մի՛ փախչիր։

Եւ եկն էշն առ առիւծն, և աղուէսն
կալեալ զփողք իշուն, հանեալ զսիրտ իշուն
և զականջն կտրեալ կերաւ։ Եւ ասէ, է-
թէ դեղ է՝նա լաւ է ինձ քան առիւծուն։

Եւ գնաց աղուէսն առ բժշկապետսն,
և առ առիւծն՝ և ասէ. եթէ եկէ՛ք՝ զար-
մացք և հիացման իւք տեսէք, զի այն էշն
ոչ ականջ ունէր և ոչ սիրտ։

Եւ երբ եկեալ տեսին, ասէ աղուէսն

ցեժիշկան. եթէ ընդէր զարմանայք եթէ սիրտ և ականջ չունի. թէ դա սիրտ և ականջ էր ունեցեալ, երբ յառաջն առ. առիւծն եկն՝ և զմռնչոյն լսել էր, նա կրկնակի չէր դարձեալ։ Նա արդարացուցին զբանն աղուէսուն։

Ա՛յ մեզ՝ զի ականջ ունիմք՝ և ո՛չ լսեմք զսպառնալիս դժոխոցն. և սիրտ ունիմք, և ո՛չ իմանամք զխաբէութիւն սատանայի։

Ամենայն մարդ՝ որ զմեղսն թողու, և այլվայլն մեղքն դառնայ, նա մեռանի 'ի ձեռն սատանայի, ոչ էշն մեռաւ. առիւծն և աղուէսն են սատանայ. և էշն անդարձ մեղաւորն, որ ոչ դառնայ 'ի մեղաց։

107 Դկեալ բժշկապետ մի 'ի քաղաք մի, ձայնէր և ասէր ընդ մարդիկ, թէ խիստ բժիշկ եմ. և ամ ցաւոց դեղ ունիմ. և զհի հանդն ողջ առնեմ։

Նա այր մի կամէր ծաղր առնել զհաքիմն. և առեալ իշու ագի մի, և պահեաց զնա ընդ հանդերձովն, և ասէ ընդ հաքիմն. ով իմաստուն բժիշկ՝ դայն խաղեալ է զիմ իշուկն, կարէա՞ զիմ իշուն դեղ առնել որ ողջանայ։

Եւ ասէ Հաքիմն, Խիստ քաջ. զնա՛ ըստ դէկան մի՝ որ տամ սև մլհամ և սպիտակ որ ողջանայ. և այրն զիշու ագին եցոյց և ասէ. այս ագուն կարես դեղ առնել. և նա ասէ, ով այր՝ այդ որ ՝ն ծ կարէ դեղ առնել՝ որ ստեղծիչ է. ես զի՞արդ կարեմ զիշուն ա՞գին, որ է նշան իշուն, էշ առնել։

Այ մեզ՝ զի նշան է մնացեալ 'ի մեզ քրիստոնէութե՛ն ոչ այն իշուն ագին. անուամբ միայն եմք քրիստոնեայք՝ և ո՛չ գործովք։ Այց հաւատք առանց գործոց դատարկ է. զի ոչ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, նոյնպէս և հաւատ առանց գործոց։

108 Ուրիշ մի սուտ հիւանդացեալ՝ 'ի քարայր մի մտաւ, և ասաց՝ որ ՝մ կենդանիք 'ի յինքն 'ի տես գան. և զարջն դռնապան էդ 'ի դուռն քարայրին. գազանք և էրէք որք մտանէին առ առիւծն 'ի տես, նա զամենն ուտէր. և այլ ոչ էլանէին։

Այսն խոզն, քանզի ընուէ՛ 'ի վայր հայե՛ ցողէ. կանգնեցաւ 'ի դրանն, և ո՛չ մտանէր։ Այս ասէ դռնապանն, մտա՛ 'ի ներս.

Եւ

և ասէ ոչ մտանեմ, քանզի որ մտեալ է՝ այլ
չէ ելեալ. այսպէս։ Եւ էհար
դռնապանն զխոզն. և խոզն բարկացեալ
զբաշն լարեաց և էզարկ զարջն, և ընդ երբ
կուս կէս արար և մեռաւ։

Յուցանէ. թէ քարայրն դժոխքն է.
և առիւծն սատանայ է. և արջն իւր զօրքն է։
Եւ մեղաւորն՝ որ անդարձ է մեռեալ և 'ի
դժոխքն է անկեալ, այլ ոչ կարէ ազատիլ։
Եւ խոզն որ դարձաւ և ոչ մտաւ 'ի քարայ
րին, նա այն մեղաւորն է՝ որ 'ի մեղաց դարձ
ձաւ՝ և ոչ մտաւ 'ի դժոխքն։ Այսպէս և
մամեղաւորն որ զղջանայ, և ոչ գործէ զգ
մեղս, յամօթ առնէ զսատանայ, ոչ արար
խոզն զարջն։

109 Այր ոմն հազար խոզ էած 'ի մի տե
ղի՝ և զպարիսապ էած շուրջ. և իշաք կորեկ
և գարի բերէին, կերակրէին և բաէին զգ
խոզան։ Նա իշուքանքն 'ի բանէն երբ գայ
էին, և քուռկունքն երթային մօտ 'ի խոզերն՝
թէ ուտեն 'ի կորեկէն կամ 'ի գարւոյն,
պահապանքն ոչ թողուին, այլ 'ի կատաւին
հարկանէին, և ծեծէին։

Եւ յորժամ իշուճանքն գային, նա-
քուռկնին գանկատէին մօրերուն, և ասէ-
ին. թէ խոզերուն անխնայ կու տան՝ թէ
կերէք, և մեք սովամահ կու լինիմք։ Եւ
ասեն իշուճանքն ընդ քուռկնին. թէ համ-
բերեցէք, այն խոզերն որ կուտեն՝ նա պի-
տի որ վճարեն զամէն զինչ կերեալ են։

Եւ անցին աւուրք ինչ. և ահա եկն թա-
գաւորն՝ նստաւ 'ի վրայ պարտէզին. և հրամայ
եաց՝ որ զամէն խոզերն կապեն՝ և ընդ մէջ
կտրեն. և սկսան կապել և կտրել ընդ մէջ։
Եւ սկսան խոզքն բողոքք հարկանել՝ և ճիչ
բառնալ. և ճչէին առաւել քան զայլ կեն-
դանիս։ Եւ ասեն քուռկնին ընդ իշուճանին,
թէ այն ինչ ճայն է. և ասեն իշուճանքն, թէ
կու վճարեն խոզերն զոր կերեալ են։

Եւ տեսեալ քուռկնոյն զտանջանս խո-
զին՝ դողայն և կանչէին. և անկան յոտս
իշոցն և ասեն՝ թէ վա՜յ այ տեսէք, թէ գա-
րէհատ 'ի կճղակ մէջերս է կապեալ, կամ կո-
րեկհատ 'ի կռնակին. և ասեն մայրերն ընդ
քուռկնին, թէ մի՛ վախէք՝ ոչ կերեալ է
նա՝ այն վճարէ. դուք մի՛ հոգայք։

Յուցանէ. որ խոզքն մարմնաւոր մար-

դիւրքն են և փափկասէրք, և անզգեղջ և անդարձ մեղաւորքն և իշխանքն. և քուռկնին աղքատքն։ Եւ այն որ ծեծէին, և ոչ տային թոյլ ուտելոյ. որ և մեղաւորն հարկանէ զաղքատն՝ և ոչ առնէ զողորմութիւն. և ընդանձն ասէ՝ թէ կէր և խմէ՝ որ չհիւանդանա։ Եւ թագաւոր ասէ. որ և յաւուր դատաստանին ասէ վա՛ մեղաւորացն, թէ կտրեցէ՛ք ըմբջ՝ և հանէք ՚ի խաւարն արտաքին. ուր լալ աչացն է, և կրճել ատամանցն։

110 ▌սպիտակ հաւ մի ՚ի թագաւորացուն։ Եւ յորժամ մարդն հիւանդանայ, նա բերեն զհաւն մօտ ՚ի հիւանդն։ Զի ունիցի հիւանդն դարձ որ առողջանայ, նա հաւն քաղցրութիւն հայի ՚ի հիւանդն, և գիրկ արկանէ, և զհով հարու թևովն։ Այսպա թէ մահու լինի, հաւն խորոր հայի, և դարձուցանէ զերեսն ՚ի հիւանդէն և փախչի. և այն հաւովն կարեն գիտել մարդիկ զմեռանելին և զապրելին։

Յուցանէ. հաւն այս օրինակ է, և հիւանդն մեղաւորին. արտարիչն ուծ հայի ՚ի

մեղաւորն , ոչ հայի հաւն 'ի հիւանդն ։
Եթէ կամք ունի որ դառնայ և զղջանայ ,
նա ահա քաղցրութիւն 'ի մեղաւորն հայի , և
գիրկ արկանէ և համբուրէ . զի ո՛չ կամի
զմահ մեղաւորին , այլ զդառնալն 'ի չար
ճանապարհէն ։ Ապա թէ չունենայ կամք
մեղաւորն դառնալ 'ի մեղաց , նա ահա դար-
ձուցանէ զերեսն 'ի մեղաւորէն . ոչ ասէ
մարգարէն , դարձուցից զերեսս իմ 'ի նո-
ցանէ , և ցուցից նոցա զինչ լինելոց է ։

III Յոր ոմն մեծատուն ունէր բազում
կապարապար ոսկի և արծաթ , և տարեալ թա-
ղեաց 'ի գետին ։ Եւ ծառայքն տեսին զտե-
ղին ուր թաղեաց . և 'ի գիշերի գաղտ հա-
նին , առին և փախեան ։ Եւ իմացեալ այրն
որ չկացեր ոսկին և արծաթն , սկսաւ լալ
փետել զմօրուսն՝ և վայ տայր անձինն . և
նեղասրտեցաւ՝ և կամէր չու�ան առնուլ և
կախել ։

Եւ տեսեալ այր մի իմաստուն , ասէ .
ընդէր խեղդիս ։ Եւ ասէ . ծառայքն իմ
զոսկին և զարծաթն իմ գողացան և փա-
խեան ։ Եւ ասէ իմաստունն . որչափ էր

ոսկին. և անդ սալի քար կայր. և ցուցանէր մեծատուն, թէ այսչափ էր՝ և այնչափ էր։

Եւ առեալ իմաստուն զսալաքարն, թաղեաց 'ի տեղւոջն ուր ոսկին էր. և ասէ իմաստուն, ահա ոսկին քո աստ. քանզի անպէտ էր քեզ իբրև զքարս զայս։ Եւ քանիւ այսուիկ իմաստուն մխիթարեաց զայրն. և թաւիեաց, որ ոչ խեղդեցաւ։

Յուցանէ. թէ ամ մարդ որ զոսկին և զարծաթն սիրէ, նա զբերդ զայն այրն է, որ ոչ հոգւոյն եղև և ոչ մարմնոյն։ Եւ վասնանակ շահոյն կամէր խեղդիլ, և անձն նամահ լինիլ. զի արծաթասիրութիւն արմատ է ամ չարեաց։

112 Ծառ մի 'ի հնդկաց աշխարհն, և ունի պտուղ գեղեցիկ և քաղցր. և է տերևաւոր, և ունի շուք գեղեցիկ։ Եւ է 'ի սահմանս նորա իժ օձ բազում. եթէ օձն 'ի մարդկանէ ոք 'ի ծառին տակն գտանէ, չխայթէ. ապա թէ 'ի զատ գտանէ 'ի ծառէն՝ խայթէ։

Յուցանէ. թէ ծառն ամ է, և պտուղն և շուքն պատուական է այր, և օձն սատանայ. է

եթէ զոք գտանէ 'ի դուրս 'ի պատուհանէն
նէն ՝այ , նա խայթէ որպէս օձն այն ։

113 Եւ ահա ժողովեցան 'ի մի տեղ տան
վաճառականք . և գնացին ընդ ճանապարհ
մի , և մտին յերկիր մի օտար . և յերկիրն
այն էր սով , և խժ , և օձ , և նեղութիւն . և
վաճառականքն տարակուսեցան ։ Եւ ան-
կաւ յետոյ նոցա հրեղէն պարիսպ , և ոչ կա-
րէին յետս դառնալ ։ Եւ առեալ նեղ
ճանապարհ մի երթային , թերևս գտանի-
ցեն զքաղաք՝ զի առևտուր արասցեն . և
գնացին ամ մի մեծաւ աշխատանօք , և ոչ
գտին զշէն . և լալով և ողբալով կոծէին
զանձինս իւրեանց ։

Եւ ահա բուսաւ նոցա թև մի արծուոյ .
և նոքա ՝ջանացին , և զթև մի այլ շինեցին ։
Եւ հինգն 'ի նոցանէ կորեան . և հինգն
թռեան և վերացան , և հասին գաւառ մի
լուսեղէն և գեղեցիկ ։

Եւ թագաւոր քաղաքին առաքեաց առ
նա զօրականս՝ և ասէ . բարի եկիք , ահա՛
քաղաքս առ՝ջի ձեր . յոր տեղ կամիք դուք՝
'ի հոն հանգիք ։ Եւ համբուրեաց թագա-

ւորն զվաճառականան, և զոմէաց և ասէ.
վայշ է ձեզ՝ որ ընդ նեղ ճանապարհն եկիք։

Եւ մեռալ՝ի քաղաքն զոմին զվաճառա-
կանան՝ զորս՝ի բազում ժամանակս ցանկայ-
ին զի տեսանիցեն։ Եւ զոմին զգանձս՝ի
վաճառել, և զդիպակս և զկումաշն՝ զոր
կամէին գնել. և ուրախացան մեծաւ ու-
րախութիւն։

Զուցանէ. թէ ասան վաճառականքդ ա-
զամէ և իւր ծնունդքն. և այն օտար էր-
կիրն է այս աշխարհս՝ ուր կայ սուլ և իժ և
օձ, որ է սատանայ. և էկեալ ասա յանման
հական զրախատէն, ՝ի նեղուէ կամք հոգ-
ալ և մարմնալ։

Եւ այն որ թեւ արծուէ՛ի բուսաւ, այն
հաւատն է. որ ած յերկնից յերկիր ինչաւ,
և հաւատս ես մարդկան։ Եւ այն որ չա-
նացին և թեւ մի ևս ինքեանք չունեցին, նո-
քա են որք չանացին, և բարի գործեցին,
մէկ թեւ հաւատքն, մէկ բարեգործուն։

Եւ այն հինգն որք կորեան. նոքա են որ
մեղս գործեցին, և կորեան՝ ի ձեռն սատա-
նայի. որք են դարք ձախակողմանցն, որք
կոչին յիմարք կուսանք։ Եւ այնք որք

թուեան, նոքա են որք լայցին և սդացին, և զանձինս իւրեանց չարչարեցին վա՛ռ արքայ-
ութեն. որք են դատք աշխարհանցն, որք
կոչին իմաստուն կուսանք։

Եւ այն լուսեղէն գաւառն՝ երկնից արքայութին է, քաղաքն անդրանկաց վերին-
երուսաղէմ։ Դադաւորն ՅԾ է, և զօրականք հրեշտակքն. որ և ՅԾ բազում հրեշտակս առաքէ՝ յորժամ մեռանի արդարն. և գովեն զարդարան, որք զերկրաւորս կենս արհամարհեցին։ Եւ համբուրէ ՅԾ զարդարան և ասէ՝ վա՛շ է ձեզ. որ ընդ նեղ ճանապարհն եկիք, որ է չարչարանք և նեղութիւնք. ոչ ինքն ասաց, նեղ է ճանապարհն, և անձուկ է դուռն, որ տանի 'ի կեանսն յաւիտենից. և սակաւք են, որք գտանեն զնա։

Եւ այն՝ որ գտանէ բեհեզս և ծիրանիս և զդիպակս և զակուռնս, որ է բարեգործութիւն, պահքն, սէրն, համբերութին, և այլ բազում։ Եւ այն, զի գտին զվաճառականսն, զորս 'ի բազում ժամանակս ցանկային տեսանել. որ և արդարքն ուրշափ էին յայս կեանքս, նա ցանկային զի տեսանի-

ցեն զնոսա մարգարէսն, և զառաքեալսն, և զՀայրապետսն, և զմարտիրոսսն յարքայութենէ երկնից. որ և գտեալ ուրախանան յաւիտեանս յաւիտենից։

114 Այլ քաղաք մի, և բազում ճանապարհ ունէր երթալոյ 'ի քաղաքն յայն։ Բազում մարդիկ գնացին մի մի ճանապարհաւ. և մին մարդն կէցաւ, և զսօղէրացի փակէրն կապէր. և դուռն քաղաքին փակեցաւ, և ոչ կարաց մտանել։

Ցուցանէ. եթէ փոքր առաքինութի՝ և եթէ մեծ՝ տանի զմարդն յարքայութիւնն։ Այլ որ ընդ աշխարհիս զբաղանան զբաղի և 'ի մէջ մեղաց շաղախի, նա ոչ կարէ հասանել արդարոցն, և մտանել 'ի քաղաքն անդրանկաց. ոչ այլն այն, որ ընդ սօղերուն եղև և ոչ ՀՀաս ընկերացն, և ոչ մտաւ 'ի քաղաքն. քանզի փակեցաւ դուռն։ Այսպէս փակի դուռն ողորմութեանն անողորմից և անդարձ մեղաւորացն յաւուրն դատաստանին, ոչ փակեցաւ յիմար կուսանացն։

115 Ի՞նչ ասացին ընդ Իրեարս, թէ ընդէ՞ր որ մեք ոչ ղէն ունիմք և ոչ եղ

ջիւր . և կատուն զմեզ դիւրաւ կալնու ։
Եւ ոմանք մկունք սրեցին փայտ , և կապե-
ցին 'ի գլխանին . որ թէ կատուն գայ , մեք
կռուիցուք որ ոչ առնու զմեզ ։

Եւ ահա եկն կատուն , և մկունքն փա-
խեան , և ընդ ծակն 'ի նեբս մտին . և այնք
որք զփայտն եղջիւր էին կապել , ոչ կարա-
ցին մտանել ընդ ծակն . և կատուն կա-
լաւ և եկեր զնա ։

Յուցանէ . մեզն որ եղջիւր կապեաց ,
այն մարդիկն են որք հպարտանան , և ամ-
բառնին 'ի ձեռն սատանայի . ոչ որոգայ-
թեցաւ մեզն 'ի ձեռն կատուին ։

ІІІ6 ( )ձն յորժամ ելանէ 'ի ծակէն , և
երթայ ընդ որ և կամի , նա հինգ ծուռ
առնու . հինգ տեղ ծռի ինքն , և ապա կա-
րէ գնալ ։ Եւ յորժամ գայ 'ի ծակի դուռն
ըղերդի , և ապա կարէ մտանել 'ի ծակն՝
յիւր հանգստարանն ։

Յուցանէ . որ մարդն հինգ զգայարան
ունի . աչքն , ականջն , բերանն , ձեռքն ,
ոտքն . նա մարդ յորժամ գնայ 'ի մեզ՝
զհինգ զգայարանն ծռէ ։ Զ.ջօքն չար

հայի • ականջօքն չար լսէ • բերանովն չար խօսի • ձեռօքն անօրէնութի գործէ • ոտօքն 'ի չար ճանապարհ գնայ։

Եւ յորժամ մարդն գայ եկեղեցւոյ դուռն յաղօթել, նա պարտէ զհինգ զգայարանսն ըղծրդել, և 'ի չարէն կարել • և ապա յեկեղեցին մտանել և աղօթել • որ է հանգստարանն մեր • և ապա ոչ ընդունելի լինի աղօթքն։ Որպէս օձն այն թէ չղծրդէ զհինգ ծուռն • նա ոչ կարէ մտանել 'ի ծակն և 'ի հանգստարանն։

117 (՝) ՝ Օձն երթայ 'ի դուռ և 'ի կանանչ դաշտ, և 'ի ծաղկանց մէջ կանգնի 'ի վերտուտանն • և իմանայ թէ հոտն յոր դիհացգայ, և դէմ հովոյն կանգնի • և հոտն զծաղկանց հոտն ընդ ինքն զարկնէ, և պարարտանայ 'ի հոտոյն։

Եւ ծաղիկ մի կայ՝ յորժամ այն ծաղկին հոտն ընդ ինքն դիպի, նա լուսատու մարգարիտ մի 'ի գլուխն յօրինի • և դիշերն ընդ որ երթայ օձն, այն լոյսէ իւրն • և լուսաւորէ մարգարիտն զօձն։

Յուցանէ • թէ դաշտ կանաչ եկեղեցի

այն

ապայ է, և ծաղիկն պատուհանն ապայ է, առա-
քելական և մարգարէական։ Եւ այն մեծ
ծաղիկն՝ որ գեղեցիկ է, և զլուսատու մար-
գարէս շնորհէ. այն աւետարանն քէր է, և
հոգին հոգին աբ։

Եթէ որ իմանաս էրթայ յեկեղեցի
ապայ, և հաւատով մարիկ դնէ ապայ բանիցն,
նա հոգին աբ անուշահոտութիւն արբուցանէ
զլսօղաց։ Եւ եթէ զաւետարանական բանն,
հաւատով և սրտի մտօք առնու 'ի միտ, նա
լուսատու մարգարէս լինի անգին, և զհոգ-
ւոյն խաւարն՝ որ է մեղքն, հալածէ. և
զաշխարհիս կեանքն որ է սուտ լոյս՝ մութն
երևեցուցանէ։

118 Որ մի ձմերուկ մի գողացաւ 'ի
պարտիզէն, և կամէր կարել։ Խօսեցաւ
ձմերուկն և ասէ. մի՛ կարեր զիս, զի 'ի միջի
իմ խարտացի հշկայ, կա՛ց մինչ որ աճեմ, և
ապա կարէ։ Եւ հաւատաց այրն՝ և տա-
ղեալ 'ի տունն եդ 'ի պատուհանն. և եկաց
անդ միջի պատուհանն և պատուհանն՝ և
երկաթ երեսուն թիւն պատուհան, և պատուհանն
'ի գերեսուն։

Յուցանէ . յորժամ մարդն գերի ընկ-
նի , պարտէ ասել թագաւորի որդի եմ,
կամ մեծաւորն , որ չապանեն , այլ պահեն . մի
թէ գան գանձ տան և գնեն ։ Եւ ծառայն
կամ մահով խալսի , կամ փախչի և ազատի ։

119 Որ ծառ մի քարձր յոյժ , և տերևք
նր մեղը կաթեցուցանէին . և այր մի էլեալ
'ի նմա լիզէր զտերև նր ։ Եւ մկունք էր-
կու կրծէին և հատանէին զծառն . և կայր
առաջի ծառոյն գուբ մի սոսկալի , և ահա-
գին վիշապ մի 'ի նմա ։ Եւ այրն այն ոչ
երկնչէր , և ոչ դադարէր 'ի լիզելոյ զտերևն ։

Յուցանէ առակս . թէ ծառն ժամա-
նակ է . և մեղը 'ի նմա մեղքն է և հեշտու-
թիւն , զոր գործեմք լիզելով ։ Եւ երկու
մկունքն տիւն է և գիշերն , որք հատանեն
զժամանակս մարդոյն . և գուբն գերեզման-
ն է . և վիշապն մահն է ։ Այլ մեզ՝ զի
հեշտացեալ եմք յայսցանէ , որք կան առա-
ջի մեր , և ոչ մտածեմք զօր մահուն ։

120 Այր մի ունէր կին մի քարկացող և
անզգամ և լեզուանի . որ հանապազ ան-
հանդիստ առնէր և տանջէր զայրն իւր ։

Եւ յաւուր միում՝ ի միտ էած զբանն սա-
ղոմոնի՝ թէ լաւ է յանապատի քնակիլ՝
քան ընդ կնոջ անզգամի լեզուանուց և
բարկացողի։ Եւ ասէ՝ ի կին։ այլ կին։
տուր ինձ պարան զի երթայց՝ ի լեառն՝ և
բերից տանս փայտ վառելոյ։ զայս ասաց՝
և երթայր՝ ի լեառն որ անդ քնակի։ Եւ
կինն աղաչատեաց և գարշմնեաց։ և այրն
լալով գնաց՝ ի լեառն։

Եւ իբրև գնաց և՝ ի շուրջ էկն, էգիտ
անդ՝ ի լեառն դատարկ ջրհոր մի։ Եւ ասէ
՝ի միտս իւր։ երթայց, բերից զկինն իմ
ատ՝ ի ջրհորս ի ջուցից՝ և թողից ատ։
Եւ գնաց առ կինն, և ասաց։ այլ կին՝ ես
քեզ բան մի ասեմ, և դու զայն մարդոյ
մի՛ ասեր։ և ասէ կինն ինչ։ Եւ նա ասէ,
գնացի՝ ի լեառն՝ և գտի անդ դատարկ ջր-
հոր մի։ և ինձի անդ, և տեսի կանացի զարդ-
ուսկեղէն և արծաթեղէն։ ապրշան՝ մատանի
խալխալայ՝ վզնոց՝ ձրամպիտ, և այլ զարդս
կանացի։ Եւ ասէ կին ուրախութիւն, եր-
թամք հանեմք զայն, և բերեմք՝ ի տունս՝
որ մարդ չիմանայ և ոչ տեսանէ։

Եւ ելեալ գնացին այրն և կինն՝ ի բերան

հորոյն. և ասէ այրն, դու բռնէ զպարանն
և ես իջանեմ, զի դու ոչ գիտես զինչ առ-
նես։ Եւ կին ասէ, թէ ես իջանեմ։ Եւ
այրն կալաւ զպարանն, և իջոյց զկին 'ի
հորն. և բերեալ մի սայլ քար՝ եդ 'ի վերայ հո-
րոյ բերանին և գնաց։

Եկաց աւուրս բազում, և ասէ՝ երթայց և տեսից զկին իմ, թէ զի՞նչ եղև. և յորժամ եկն 'ի ջրհորն՝ ետես 'ի բերան հորոյն զդև մի՝ զի կայր անդ։ Եւ ասէ դևն, ո՛վ մարդ՝ այ համար սատի տա՛ր զսայլն 'ի յետ՝ որ ես ելանեմ, և քեզ շատ բարութի առնեմ։ Եւ սաց այրն զի՞նչ. ասէ դևն, կին մի եկն սատ՝ անկաւ 'ի ջրհորս, և անարդէր և հայհոյէր զայր մի։ Եւ ես սատցի, թէ քանի՛ քաշանք տաս, մեկ պահ դադար տուր. և նա ելթող զայր իւր՝ և վիճեցաւ ընդ իս. արդ՝ փախուցեալ զիս ազատէ 'ի ձեռաց նորա։

Եւ ասէ այրն, զի՞նչ խոստանաս ինձ. և նա ասէ՝ երթամ և մտանեմ 'ի դուռսդ թագաւորին, որ քեզ տան։ Յայնժամ այրն այն երդուցն եդ դիւին. և ծերպեաց ըզ սայլն, և էլ դևն։ Եւ սաց դևն, յոր-

ժամ գաս և առնուս զդուստր թագաւո-
րին . ես երթամ մտանեմ յայլ թագաւորի
դուստր . և դու անդ մի՛ գար . թէ չէ
յայնմանէ ելեալ՝ 'ի քեզ մտանեմ։

Եւ ելդեն, և գնացեալ եմուտ 'ի դուս
տրը թագաւորին . և աղաղակէր և ասէր 'ի
բերանոյ աղջկանն, թէ զիս այս ինչ մարդոյ
տրվէք՝ որ ելանեմ։ Եւ յորժամ տարան
զայրն զայն, և ել դեն. և գնացեալ եմուտ
յայլ թագաւորի դուստր՝ լուկէր զնա չա-
ղարչարը և տանջէր։

Եւ թագաւորն լուաւ՝ թէ փեսայ թա-
գաւորին բ.ժշկուէս առնէ, և զդեռ հալա
ծէ . յուղարկեաց թագաւորին բազում
կլայէթ և արմաղան . թէ յուղարկէ զքո
փեսայն՝ որ գայ իմ դուստրն բ.ժշկէ։
Յայնժամ աղաչեաց թագաւորն զփեսայն
իւր թէ գնայ . և նա ելեալ գնաց։

Եւ յորժամ գնաց առ թագաւորին
դուստրն, ասաց դեն . ես քեզ ո՛չ ասացի
թէ ասա մի՛ գար . և դու ընդէր եկիր։
Յայնժամ փեսայ թագաւորին ասէ . ես
եկի զի քեզ իմաց արարից . զի այն կինն
ելեալէ 'ի հորոյն, և զքեզ կարի խիստ
կուզէ։

Այսէ դևն՝ թէ ոՀրէ ։ և նա ասէ՝ թէ
սատ եկեալ է՝ ի դուրս դարպասիս ։ Եւ
ասէ դևն, Այ սիրուն Համան զնա՝ ի դուռն
արգելէ մեկ պահ՝ որ ես երթամ, ՝ի վերը
փախչիմ ։ և քեզ շատ բարութիւն առնեմ ։
Եւ այնպիսի բանիւ բժշկեաց զդուսատը
թագաւորին ։ և թագաւորն ետ նմա բա-
զում գանձս, և առեալ գնաց ։

Յուցանէ առակս, մարդ Հետ լեզուն-
նի կնոջ՝ անզգամի և բարկացողի ոչ էլանէ
՝ի Հուն ։ Զի ասէ սաղոմոն, թէ լաւ է
յանապատի բնակիլ՝ քան ընդ կնոջ անըզ
գամի, լեզուանուց և բարկացողի ։

121 Զոր մի կայր բարի, զատեալ Յամ
ջարեաց ։ և երթային ճանապարհորդք և
վաճառականք բազումք յաշխարհէ յաշ-
խարհ, և այս բարի այրս՝ ի մէջ նոցա ։ Եւ
գնացին՝ ի տեղի մի՝ որ ասէին թէ, երեք
աւուր ճանապարհ՝ այլ ջուր չկայ ։ Մէկ
ջրհոր կայ, և անտի ընդ այն այլ երեք ա-
ւուր ճանապարհ՝ այլ ջուր ոչ կայ ։ Եւ
յայն ջրհորն բնակեալ կային երկու դևք ։
և զինչ մարդ որ անդ մտանէր, ոչ էլանէր ։

Եւ

Եւ գնաց կարաւանն անդ. և ջուր զոր
ունէին հատեալ էր։ Յայնժամ ասաց կա-
րաւանն, ով առնու զիւր արեան գինն՝ և
մտանէ 'ի ջրհորս, և ջուր տայ ամենեցուն։
Եւ ոչ ոք կամէր, զի ով մտանէր և ջուր
տայր ամենեցուն։ 'Ի յորժամ զինքն 'ի վեր
քարշէին, դևն կտրէր զպարանն՝ և զմարդն
'ի ջրհորն կորուսանէր։

Եւ ասէ քարի մարդն, թէ ինձ տուք
զարեան գինն, որ մտանեմ 'ի հորն, և
ջուր տամ ամենեցուն։ Եւ առեալ զարեան
գինն, և եմուտ 'ի ջրհորն, և տայր ջուր
ամենեցուն հաւասար։ Եւ յորժամ զինքն
կապեցին 'ի վեր քաշել, դևն էհատ զպա-
րանն. և տարեալ զմարդն 'ի մաղազայն որ
կայր 'ի ջրհորն. և զի դևն այն էր այլա-
կերպ և դժնիկ սևադէմ։

Եւ ասէ 'ի մարդն այն, թէ հաւանի՞ս
ինձ. և ասէ մարդն այն, փառք քոյ որ ըզ-
քեզ ստեղծէրէ, և յօրիներ զայդ քո կեր-
պարանդ, զայդ լոյս երեսդ, զայդ ծով
աչերդ. և սկսաւ գովել զքեզ ստեղիք նոր մի
ըստ միոջէ։ Եւ էր անդ ժահահոտ գորտ
մի. և ասէ դևն ընդ այրն, թէ գորտն ինչ

աղգ է։ Եւ էր գորան այն յոյժ աղտեղի.
և այրն սկսաւ գովել զնա մի ըստ միոջէ զնամ
տեղիս գորտոյն այնորիկ։

Եւ յայնժամ էլ դևն և գորտն, և մը
տին յայլ Նէրսի մաղազայն. և փոխեցան
յայլ կէրպարան լուսափայլ. և էկին առ
այրն, և ասին՝ Հիմի ինչ եմք. զի մինն 'ի
կարիճ կէրպարանեալ էր, և միւսն յաղ-
ջիկ։ Եւ ասաց այրն այն, Էս գիտէի դուք
հանց գեղեցիկ էք, Էս այնոր համար զձեզ
յառաջ գովեցի։

Եւ յայնժամ առեալ զնա դևն՝ եմուտ
'ի Նէրսի մաղազայն. և եցոյց նմա, յոր ըզ
մարդիկն սպանեալ էր. և ասէ 'ի յայրն՝
տոքա ամենեքեան ինձ ոչ հաւանեցան՝ վա-
յնորիկ սպանի։ Եւ դու ինձ հաւանե-
ցար, ուռ քեզ որջալի և կարեւ գանձ և
մարգարիտ և ակունա, ոսկի և արծաթ, և
գնա՛ խաղաղութ, զի դևն ունէր զմաղա-
զայն։ Եւ ասէ այրն, թէ չեմ կարեր տա-
նիլ, զի հորս խոր է՝ և ընկեալք իմ գնացին։

Յայնժամ առեալ դևն զմաղեայ տօպ-
րակ մի, և եւլեց զնա ոսկւով և արծաթով
և ակամբք պատուական օք. և առեալ զինքն

և

և զտօպրակին գանձուին՝ և եդ 'ի հորուն քե-
ղանն, և ասաց գնալ։ Եւ գնացեալ էհաս
կարուժանին։ Եւ նոքա տեսին և զարմա-
ցան, թէ ոչ ազատեցաւ 'ի դիւէն։

Յուցանէ առակս, թէ քարի և խոնարհ
մարդոյն ահ օգնական է. և դէն ոչ կարէ
չար առնել նմա. քանզի ասէ սաղոմոն, թէ
արդարն յորսողաց փրծանի, և փոխանակ
ներ մատնի ամբարիշտն։

122 Մատուն աւազ էրէց մի կայր 'ի
քաղաք մի, կամեցաւ զորդին իւր քահա-
նայ առնել։ Եւ ժողովեցան բազում քա-
հանայք և եպիսկոպոսք, և յորժամ յօրհ-
նել սկսան զնոր ընծայն, յայնժամ 'ի տե-
սիլ տարան զնոր ընծայն։ Եւ էր անդ
բարձր սանդուխ մի, և սանդխին գլուխն
էր զարմանալի դարպաս մի. և էր անդ
բազմեալ լուսափայլ թագաւոր մի, և հա-
մարս առնէր քահանայից։ Եւ բերին ըզ
ծեր քահանայն 'ի սանդխին առջևն, և բե-
րին զինչ կերեալ էր 'ի ժողովրդենէն. և
կապեցին 'ի մի տեղ, և բարձին ծեր քա-
հանային, և սան՝ թէ ահա և էլ 'ի վերս, և

համար տուր թագաւորին։ Եւ նա ոչ կա-
ր էր , զի բեռն ծանր էր՝ և սանդուխն
բարձր , և հրեշտակք հրեղէն մախաթով
մուէին զնա յեռևանց։

Յայնժամ մին 'ի լուսաւոր արանցն ա-
սէ , թողէ՛ք զծերդ , զի զբր ինչ առեալ է՝
որդւոյն է կերցուցեր։ Եւ յայնժամ բե-
րին զնոր ընծայն , և բարձին զբեռն նր 'ի
վր նր . և նա ոչ կարէր հանել 'ի վեր , և
զհամարն տալ։ Եւ հրեշտակքն կարի խիստ
մուէին զնա յեռևանց . և խիստ ցաւեցոյց
զնոր ընծայն . և 'ի ցաւուն զարթեաւ և
փախեաւ , և ոչ եղև քահանայ։

Յայնժամ ասաց Եպիսկոպոսն , թէ քեզ
զինչ պատահեցաւ՝ որ չլինիս քահանայ։
Ասաց նոր ընծայն , թէ այն որ ինձ պատա-
հեցաւ՝ թէ քեզ էր պատահել , յառաջ-
դուն պիտի փախչէիր յեպիսկոպոսէ։

Ուցանէ առակս , թէ ով ուտէ՝ այն
վնասէ . և զինչ մարդ որ ուտէ և ոչ վնա-
սէ , ինքնին տալոց է զհամարն առաջի թա-
գաւորին յորժամ գայցէ։

ուսուցանէր աշակերտին զամ զիմաստուն
իւր՝ զոր գիտէր ։ բայց էրիս բան ոչ ու-
սուցանէր . վասն զի կարի իմաստուն էր աշա
կերտն իւր . և յորժամ ուսանէր այլ ոչ
կենար 'ի մօտն . զի յոյժ սիրէր իմաստա-
սէրն զաշակերտն վասն խոնարհութեան ։ Եւ
ասէր նմա , որդեակ՝ կաց առ իս մինչև վերը
ջին աւուրն իմ . և զայն երեք բան խրատն
ուսուցանեմ քեզ՝ և գնա՛ խաղաղութիւն , և
այլ ոչ ինչ պակասի քեզ ։ Եւ նա եկաց առ
նմա մինչև յօր մահուանն ։

Եւ յորժամ հիւանդացաւ իմաստա-
սէրն , և գիտաց զվախճանն իւր . յայն-
ժամ ասաց ցաշակերտն իւր , եկ ասեմ ե-
րեք խրատն ։ Եւ ասէ ցնա . մէկ՝ զքո աղէկ
օրդ վատի մի՛ տար . երկու՝ յետնուց 'ի վեր
ճանապարհ մի՛ գնար . երեք՝ զինչ աչօքդ
տեսնուս՝ զայն մարդոյ մի՛ ասեր ։ Ա՝ետաւ
իմաստունն , և թաղեաց զնա աշակերտն .
և եկ գնաց 'ի քաղաքն մի ։ Եւ ետես անդ
գեղեցիկ դուռն մի բարձր , և յառաւօտն
աւելեաց զդուռն , և ջուր ցանեաց , և
գնաց . երկու օրն զայն արար . և երեք օրն
աշկեցին , և ընդունեալ տարան զնա առ
դրան տէրն ։

Եւ ասէ պարոնն , ուստի՞ էս . և նա զերեսն ասաց . և էտես պարոնն զտղայն՝ զի կարի գեղեցիկ էր և իմաստուն , և ասէ ցնա . ո՛րդեակ՝ մեր Թագաւորն որդի չունի . և եթէ կամիս՝ տարայց զքեզ առնա , զի եղիցիս որդէգիր , և ժառանգ աթոռոյն ։ Եւ ասէ , դու գիտես տէր իմ ։ Եւ առեալ զնա առ Թագաւորն տարաւ՝ և առ Թագուհին . և արարին իւրեանց յորդի . և եղև նա որդի Թագաւորին ։

Եւ յաւուր միում էլ Թագաւորն յորսէրեցաց . և ունէր Թագաւորն զմատանի մի , որ յաջողուէ տլխիմ'ի վրայ ականն գրեալ էր . և զայն մոռացեալ էր Թագաւորն 'ի նեղքև բարձին ։ Եւ ասաց որդէգրին իւր . Թէ 'ի նեղքև բարձին մոռացայ զմատանին , գնա՛ և բ.էր զմատանին յաջողուէ ։ Եւ նա էլ յերիվար , և գնաց զմատանին առնուլ . և էտես զմէկ նայիպն յանկողին Թագաւորին . և ինքն էառ զմատանին և գնաց . և ո՛չ ումեք յայտնեաց զբանն ։

{Այնժամ խորհուրդ արարին նայիպն և Թագուհին , զի յորժամ գայցէ Թագաւորն՝ սպանանել տան զորդի Թագաւորին ։

Եւ 'ի գալ Թագաւորին, գնաց Թագուհին ընդ առաջ, և զուր մատնեաց զանմեղ մանուկն, ոչ կինն պետաբերէի զյովսէփ, և ասէ՝ Թէ յորժամ եկն 'ի գիշերի տանել զմատանին, դատապարտեաց զկս։

Իսկ Թագաւորն յամաչելոյն ոչ ապան զմանուկն. այլ ուղարկեաց զնա այլում Թագաւորի՝ որ ընդ Իշխանուքն էր եղեալ իւրն. և գրեաց առ նա գիր այսպէս։ Յորժամ գայ Թղթիս բերօղն առ ձեզ, զգլուխն կտրեցէք, և յիս ուղարկեցէք։

Եւ մատնահարեցին զԹուղթն արքունական մատանեաւն, և եառն յորդէգիր Թագաւորին, որ տանի առ նա։ Եւ գրեալ կայր 'ի մէջ Թղթին. Եթէ ասէ, որդի եմ Թագաւորին, կամ նայիպն, կամ հաւասարն իմ, մի՛ լսէք նՁ՝ հատէք զգլուխն։

Եւ առեալ զԹուղթն գնաց. և յորժամ յետինքն մօտ եղև 'ի գեօղ մի, յիշեաց զբանն Իմաստասիրին՝ Թէ յետնուց 'ի վերջ 'ի ՁանապարհՏ մի՛ գնար. յայնժամ զտապըլպաղն էզարկ՝ և կեցաւ։

Եւ էլ այն նայիպն՝ զոր եառես յանկողին Թագաւորին. էկն յառաջ՝ և առեալ տա-

բաւ 'ի տուն իւր, և ասաց. Հանգի՛ր, կե՛ր,
ա՛ռ զքեզ և ուրախ լե՛ր. և տուր զթուղթն, և
քեզ խաղաղ ըներեմ. և նա՛ եւ զթուղթն.
և առեալ գնաց՝ և եւ թագաւորին։ Եւ
յորժամ կարդացին զթուղթն հատին ըզ
գլուխն, և եւտուն յայլ ոմն մարդ՝ տանիլ
մեծ թագաւորին. և նա ըներէր 'ի գլուխն.
և զայն էառ որդի թագաւորին, և տա-
ւեալ եւ 'ի հայրն։

Եւ տեսեալ զայն՝ զարմացաւ թագա-
ւորն. և գիտաց զքանն՝ որ յայ էր յաղո-
ղեալ։ Եւ ասէ՝ ո՞րդեակ զի՞նչ գործեալ է
քո. զի քեզ էր որոգայթս պատրաստեալ.
'ի քո որոգայթն նա անկաւ։ Եւ նա ա-
սաց՝ թէ դաւիթ ասէ. թաքուցին ինձ
զորոգայթ, և անկան ինքեանք 'ի նոյն։

Ցուցանէ առակս, թէ մարդ մարդոյ
չար առնէ, և յորժամ որոգայթ ձգէ և
որսայ, նա ինքն պիտի անկանի յորոգայթն.
և չար մարդն պիտի գայ չարի. ոչ ասէ
դաւիթ, փորեցին առաջի իմ հորխորատ,
և անկան ինքեան 'ի նոյն։ Եւ ասէ, բարի
արա՛, և չար չի՛ մնար. ոչ ասէ սաղոմոն,
թէ արդարն յորսողաց փրկ-անի. և փոխա-

Նակ Նորա մատնի ամբարիշտն։

Եւ թէ ոք մարդոյ ամօթն ծածկէ, նա ՝ծ իւրն պիտի ծածկէ, ոչ զորդի թա՝ գաւորին բազում բարուէ՝ որ արար ՝ծ. և հրամայէ աւետարանն, մի՛ դատէք, և ո՛չ դատիցիք. մի՛ պատժէք, և ո՛չ պատժիցիք։

124 Եր պատանի մի աղօթարար՝ որ զ՝ամ աղօթս՝ իւր առնին կատարէր. և այլ բա՝ զում աղօթս առանձին առնէր, և մա՝ տուցանէր ՝ծոյ։ Եւ սատանայ կամեցաւ ըզ մանուկն զայն ՝ի փորձանս ձգել. և յարոյց զկախարդ մի, որ ասաց ՝ի պատանին, թէ էկ ՝ի տուն իմ, և զոր ինչ խնդրես յինէն, տաց քեզ։ Եւ նա գնաց անմեղուք ըզ հետ կախարդին։

Եւ կախարդն տարեալ զնա ՝ի տուն իւր՝ և փակեաց զդուռն իւր. և եմոյծ զնա այլ ներսագոյն տուն, և ասաց ցպատանին. դու կացիր ասա՝ մինչև ես եկից. և նա եկաց անդ։ Եւ կախարդն ելեալ գնաց, և յու՝ շացաւ մինչև ցերեկոյ. իսկ պատանին յա՝ ղօթելոյ ո՛չ դադարէր։

Եւ յուժամ եկն կախարդն, և գիշերի

ման խաղաղեալ էր . և եբեր երկու ձի , և
ասաց՝ 'ի մէկն դու հեծիր , և'ի մէկն ես ։
Հեծան և գնացին . և պատանին ոչ գիտէր՝
թէ ուր տանէր զինքն ։

Եւ գնացին ընդ անհուն դաշտ մի . և
դաշտն լի էր եթէովպացուովք . և կայր 'ի
մէջ դաշտին սեաւ բլուր մի . և'ի վերայ սեաւ
բլրին չարտախտ մի . և'ի վերայ սեաւ չարտա-
խտին կայր սեաւ թախտ մի . և'ի վերայ սեաւ
թախտին կայր սեաւ թագուոր մի բազմեալ ։

Եւ գնաց կախարդն առ սեաւ թագա-
ւորն . և ասաց այն սեաւ թագաւորն ցկա-
խարդն . թէ իմ չարադատ մշակ՝ այսօր ինչ
ես արարեալ՝ և կամ ինչ ես վաստակեալ ։
Եւ ասէ կախարդն , թէ զայս պատանիս
բերի՝ որ երկիր պագանէ քեզ ։ Եւ թագա-
ւորն ասաց ընդ պատանին . ով պատանի՝
եթէ երկրպագես ինձ , զքեզ հազարապետ
կարդեմ զօրաց իմոց ։

Յայնժամ աղօթքն 'ի միտն անկաւ՝ զի
մոտ էր առաւօտն ։ Եւ ասէ ցնա պա-
տանին , թէ ես սովոր եմ յայսմ ժամու էր-
կիր պագանել քի՝ որ խաչեցաւ վասն մեր , և
աղատեաց զհոգիս մեր 'ի դժոխոց՝ և'ի ձե-

ռաց սատանայի։ Եւ անկեալ երկիր եպագ-
ընդ արևելս, և օրհնեաց զնա։

Յայնժամ եղև ձայթմունք, և որոտ-
մունք ահագինք. և պատանին յուշաթափ
անկաւ անդ. և յորժամ յուշաբերեալ է-
ղև, ել'ի վեր՝ և զոչ ոք եառեա՝ քայց զինքն
'ի մէջ անհուն դաշտին. և հրեշտակն եցոյց
զձանապարհն՝ և գնաց 'ի շէնն, և պատմեաց
զեղեալ գործն։

Յայնժամ լուեալ թագաւորն, և տա-
րաւ զպատանին առ ինքն՝ և ասէ. ո՛վ քարի
պատանի, ես յերուսաղէմ պիտի գնամ, է՛կ
տանիմ զքեզ ընդ իս՝ որ երկիրպագանես
քի, և աւր գերեզմանին, և ամենօրինական
տեղեացն քի այս մերոյ։

Եւ թագաւորն էառ զպատանին 'ի հետ
և գնաց. և յորժամ գնացին երկիրպագա-
նել քի ինքն և թագաւորն, քի պատկերն
խօսեցաւ և ասաց. ո՛վ պատանի 'ի միւսանգ-
ամ գալստեան իմոյ քեզ քիւր հազարաց
ամր առնեմ. փոխանակ այնորիկ՝ որ առաջի
զօրացն դիւցազ ինձ երկրպագեցեր անահ,
և զիս ամ դաւանեցեր։

Յուցանէ առակս, թէ ամ զաղօթա-

սէրն յամ չարեաց փրկէ և յամ փորձանաց դիւաց, և յայն կեանքն փոխարէն հատուցանէ. ոչ հրամայէ աւետարանն քի, թէ ընդ միոյ երեսուն, և ընդ միոյ վաթսուն, և ընդ միոյ հարիւր. որ ունիցի ականջս լսելոյ, լուցէ։

125 Զուսէան և արծուին եղեն եղբարք. և միամտուի արարին, և զերդումն և դաշինս էդին, որ զորան 'ի մի տեղ բերին և ուտեն։ Եւ յորժամ աղուսէան որսայր՝ զբնայր արծուին, և 'ի մէկ տեղ ուտէին։ Եւ յորժամ որսայր արծուին, առնոյր զորան՝ և երթայր նատէր 'ի բարձր վէմն. և աղուսէան ոչ կարէր ելանել անդ։ Եւ զիտաց աղուսէան զնենգուի արծուոյն, և ասէ. 'ի բաց գնա յինէն, զի ոչ կամիմ եղբայր, ագահ, և աւազակ։

Յուցանէ առակս, թէ մարդ հետ ընկերոջ ծուռ լինի, նման է գողոց և աւազակաց. և 'ի նմանէ պարտ է հեռի լինել։

126 Այր մի ցանեալ էր յընկզի ծառի տակն պարտէզ մի ձմերուկ. և 'ի ժամ ալրողն էկն էտես ձմերուկս մեծամեծ. և

հայեցաւ 'ի ծառն՝ եւ ուրեմն զընկուզն մանրագոյն, և ասաց. որ ոչ՝ զամ զորինչ ստեղծեալ էր՝ 'ի կարգի է և նմանաւորը. քայց այս երկու պտուղս անդէպ է և աննման։

Եւ այրն պարկէալ կայր 'ի ծառին տակն՝ և վէր հայէր. և հրամանաւն այ ոստեաւ ընկուզ մի 'ի ծառէն, և կարի խիստ դիպաւ 'ի ճակատն, և պատառեցաւ՝ և էլ արիւն։

Եւ այրն էլեալ աղաղակէր առ աստ, և ասէր. որ ոչ՝ զամ զոր ինչ ստեղծէր՝ 'ի կարգի է և նմանաւորը. և ոչ զքեզ ստեղծուածոյն բան ասէ՝ նա ճակատն քան զնմա պիտի լինի. և թէ ձմերուկ էր ընկուզն՝ զնա պիտի սպանանէր։ Զի այրն ասաց, թէ ձմերուկն պիտէր ընկուզի տեղն, և ընկուզն 'ի ձմերուկի թուին։

Զուցանէ առակս, թէ զամ զոր արարր աստ՝ բարի է և ամենևին նմանաւորը. և մարդն ոչ պիտի որ այ ստեղծուածոյն բան ասէ՝ և ոչ հաւանի. և ոչ ասէ, թէ խոտան է և գէշ։

Զայր մի զիւր ժամանակն 'ի մեղս էր,

և ազգի ազգի չարեօք լցեալ, և բնաւ ոչ
հիւանդացաւ։ Եւ յաւուր միում գնաց
ենջեաց ընդ հովանեաւ եկեղեցւոյ միոյ՝ և
եկն 'ի զղջումն, և ելեալ սկսաւ եկեղեցի
շինել։ Եւ յորժամ կատարեաց զեկեղե-
ցին, հիւանդացաւ զցաւ մահուն. և ա-
սաց այրն, եթէ ահա՝ այս քանի ժամանակ է
'ի մէջ մեղաց էի՝ և 'ի մէջ չարեաց, և ոչ
հիւանդացայ. և յորժամ զեկեղեցի շինե-
ցի, հիւանդացայ՝ և մեռանիմ. միթէ եկե-
ղեցի շինելն անընդունելի է։ Եւ 'ի նոյն
ժամն երևեալ պահապան հրեշտակն ասաց.
թէ մի՛ հակառակ լինիր, ահա քեզ ողորմե-
ցաւ. և քո զեկեղեցի շինելն քան զամ
գործ լաւ համարեցաւ։

Յուցանէ առակս, թէ ով զղջանայ, և
'ի մեղաց դառնայ, ահա զմեղսն նոր ոչ յի-
շէ. և ահա կամի, որ մարդն բարի գործէ՝
և ապա մեռանի, զի իւրն արժանի լինի.
զի ահա ողորմած է։

128 Եկեղեցին պարծեցաւ 'ի սրբութի-
իւր և ասաց, թէ եմ տաճար և տուն ՅՀ,
և յիս զան քահանայք և ժողովուրդք, և

աղօթեն և մատուցանեն զպատարագ . և հաշուի ՅԾ ընդ աշխարհի՝ և մեղաց թողութիւն լինի ։

Յայնժամ գայ Ջաղացն , և ասէ ցեկեղեցին . թէ զոր ինչ ասես՝ ճշմարիտ և արդար է . քայց դու զիմ երախտիքն մի՛ մոռանար . որ գիշեր և ցերեկ աշխատիմ և դատիմ , որ ուտեն քահանայք և ժողովուրդք . և ապա գան առ քեզ աղօթեն , և երկիր պագանեն ՅԻՍ ։

Յուցանէ առակս , թէ թագաւորք և իշխանք և քահանայք ո՛չ պարտին մոռանալ զերախտիս ժողովրդոց , որք հանապազ դատին և աշխատին ոգի մեղուս . և ինքեանք ուտեն զվաստակս նոցա , և ունին զփառս և զիշխանութիւն և զպատիւ ։

129 Ես զն և ձին խօսեցան ընդ միմեանս . և ասաց ձին ընդ էշն , թէ դու ո՛վ ես , և կամ զինչ պէտք ես ։ Ես ձի եմ՝ որ թագաւորք և իշխանք և պարոնայք կազմեն զիս ոսկի զարդով , և բազմին 'ի վրայ իմ ։

Եւ ասաց էշն , թէ ամէն աշխարհի պարծանք ես եմ՝ որ վաստակիմ և չարչարիմ

և խոնձիմ. և ապա դու՝ և թագաւորդ՝ և
ամ ժողովուրդն ուտէք զվաստակն իմ. է-
թէ իմ վաստակն ոչ լինի, դու և քո թա-
գաւորն մէկ հետ մեռանիք. և դու երաշխ-
տամուռաց էր լինիս։

Յուցանէ առակս, թէ մարդ կայ՝ որ
աշխատի քան զեզն. և կայ մարդ՝ որ հանա-
պազ ձի հեծնու, աւէր ածէ աշխարհի.
և թէ աշխատաւորն ոչ աշխատի ոչ եզն,
նա մեռանի ինքն և հեծնօղն։

130 Նասուն մի քեռնակիր քարձեալ
ունէր յինքն մէկ դիւհ մահադեղ, և մէկն
սուսէր ապանման. և գնացեալ դէմ էառ
'ի նեղ տեղաց մի 'ի ճանապարհին, և ոչ կա-
րէր անցանել։ Եւ յորժամ նեղեաց զինքն,
'ի մէկ դիւհէն սուսերն խոցեց, և 'ի մէկ դի-
հէն մահադեղն հեղաւ, և ապան զնա։

Յուցանէ առակս, թէ քեռնակիր է
մարդս. որ պիտի քարին քառնայ հանա-
պազ 'ի յողն իւր. և մարդն յիմարեալ է 'ի
ձեռն սատանայի. և փոխանակ քարուցն
մեղք քարձեալ 'ի յողն իւր, որ ոչ սուր
մահադեղ ապանանէ զհոգին։

131 Խելուրդն բնութիւն ունի՝ որ զբոյնն մոռանայ և կորուսանէ. և հանապազ զգետնի հողն'ի վերայ որ գտանէ. վասն այսորիկ տեղէ 'ի տեղ երթայ և որոնէ զբոյնն զոր չինէ. և յամ տեղ հող կուտէ, և ոչ 'ի մէկ տեղ դադարի։

Այց ասեն թէ, ինքն վասն իւր հոտոյն տեղեաց 'ի տեղի փոխի. զի այնպէս գիտէ՝ թէ հոտն'ի տեղեացն է, և ասա և անդ հողն 'ի վերայ տայ. և գէշ հոտն յինքն է։

Յուցանէ առ.ակս. թէ կան մարդիկ յաշխարհի՝ որ միշտ և հանապազ տեղեաց 'ի տեղի փոխին՝ զի անհանգիստ են. և յայլոց վերայ արկանեն զվնասն, թէ նոքա ոչ տան հանգստութիւն։

132 Ենդանի մի կայ խիստ անտխակալ և անվնաս, և բնակի 'ի ծովն և 'ի ցամաքն, և խոտ արածի. և մէկ էղջերուր կայ 'ի ձակ կատն, և ծայրն 'ի վայր է. և խաչանման էղջերուն երթայ 'ի ծովեզրն, զծովն խառնէ՝ և ջուրն քաղցրանայ. և ըմպէ ինքն, և զինչ՝ որ անդ կենդանիք կան. զի նմա հայրն, որ երթայ 'ի ծովն, և խառնէ զջուրն՝ զի ինքեանք ըմպեսցեն։

Յուցանէ առակս. թէ բարի մարդիք՝ վարդապետք, և ճգնաւորք, և ընտրեալք, որք չունին զչարութիւն, նոքա կարօղ են զդառն քաղցրացուցանել, զչարն 'ի բարի դարձուցանել։

133 Իշուն բնութիւն և սահման է, որ 'ի դժուարին տեղ ընկնի կամ շաղախի, այլ այն տեղուն չի գնար. 'ի մէջ կենդանեաց և անասնոցն. քան զէշն յիմար ոչ կայ. և այրսն իշուն յիմար սէ. և մարդ մարդոյ սէ. քան զէշ յիմար ես, և նա այսպէս գնայ։

Յուցանէ առակս. թէ մարդն 'ի վեր իւր բանին հարկաւոր պիտի կենայ. և զայն բանն որ փորձեալ է մէկ հետ, նա այլ յանձն ոչ առնու. և թէ առնու՝ նա քան զէշն յիմար է, և այլ առաւել անգէտ։

134 Որ այր մի՝ և ունէր կին մի անզգամ. օր մի լուսաւ յիմաստնոց՝ թէ աղէկուն այրա 'ի ծուին ձգէ, և վատի մի' մնար։ Նա այրն սուլորուն և սահմանք արար իւր, որ ամէն օր մէկ հաց տանէր և ձգէր 'ի ծուին. և մէկ ծովային կենդանի գայր՝ և առնոյր

զՀացն՝ և տանէր իւրեանց թագաւորին։

Եւ ասաւ միւսմ ասաց ծովայինաց թա-
գաւորն, թէ զայն մարդն բերէք՝ որ ըզ-
Հացն 'ի ծովն արկանէ. որ փոխարէն աղէկ
առնեմ։ Եւ այն ծովայինն որ զՀացն տա-
նէր թագաւորին, էկն յայն տեղին՝ ուր
զՀացն 'ի ծովն ձգէր։

Եւ յորժամ էարկ այրն զՀացն 'ի ծովն,
ձայնեաց նմա թէ մի՛ գնար. մեր թագա-
ւորն ասաց՝ թէ յիս բերէք զայն մարդն
որ իւրն աղէկ առնեմ։ Եւ ես այն եմ՝ որ
ամէն օր զքո Հացն թագաւորին տանիմ,
որ ուտէ։

Եւ խրատեաց զմարդն, թէ ինչ որ տայ
քեզ՝ մի՛ առնուր. և ասա՛, մէկ Հեղ բեր որ
լեզու իմ 'ի բերան քո Հասուցանեմ։ Եւ
անցոյց զքօղ յերեսս մարդոյն. և առեալ
գնաց առ ծովային թագաւորն։

Եւ թագաւորն ասաց, ո՞վ մարդ՝ ուզէ
զի՛նչ կուզես՝ տամ քեզ. և նա ասաց՝ թէ
էկ որ լեզուս 'ի բերան քո Հասուցանեմ։
Եւ իբրև Հասոյց զլեզուն 'ի բերանն, յայն-
ժամուսաւ տամ կենդանեաց լեզուն, գա-
զանաց, և թռչնոց։

Եւ յորժամ էլ 'ի ծովէն, և գնաց պառ-
կեցաւ 'ի վիմին տակն։ Եւ էկեալ թռչուն-
մի նստաւ 'ի վրայ վիմին. և ասէր, թէ այս
մարդս ո՞չ գիտէ՝ զինչ կայ թաղած 'ի վիմին
տակն։ Եւ ասաց նմա ծովային թագա-
ւորն. թէ քանդ մարդոյ մի՛ ասէր. թէ
ասես չէս ապրիր։ Եւ զոր լուաւ 'ի թըռչ-
նոյն՝ էլ և էհան 'ի վիմի տակէն զդանձն,
և տարաւ 'ի տուն իւր։

Եւ կինն խոշտանկեաց զայրն իւր, թէ
այս ուստի՛ է. և նա երկնչէր 'ի մեռանելոյ՝
և ոչ ասէր։ Եւ յորժամ կարի ստիպեաց
անզգամ կինն այն զայրն իւր թէ ասա,
յայնժամ խոստովանեցաւ մարդն, և հա-
ղորդեցաւ. զի երբ ասէր մեռանէր։

Յայն գիշերն խօրօզն երեք անգամ
ծափ էզարկ՝ և խօսեցաւ։ Եւ շունն հա-
ջեաց, և ասաց. թէ ուրախութիւն ծափ տաս՝
և խօսիս. վաղն պիտի մեր տէրն մեռանի,
և մեք անտէր մնամք։ Ա՛յս խօրօզն ասաց,
թէ ես ինչ առնեմ թէ մեռանի. ես քաւա-
տուն կին ունիմ, և իմ հրամանին հնազան-
դին։ Եւ շունն ասաց, թէ խիստ անզգամ
չար է. ասաց խօրօզն՝ թէ այդ քանդ հեշտ

է . երբ լուսանայ , թող երթայ 'ի լեառն՝
և կտրէ զքառասուն կաղնի ջալոտ ։

Եւ երբ լսեց այն մարդն զայս խօսքս ,
գնաց և արար այնպէս , ոչ ասաց խօրօզն ։
Եւ էկն և ասէ ցկինն իւր , թէ ասեմ ըզ
պատճառն . և կինն յանձն էառ ։ Եւ ասէ
այրն , յորժամ զքառասուն կաղնի ջալոտ
մանրեմ 'ի վերայ քո , ապա գիտեսես զպատ-
ճառն ։ Եւ յորժամ կտրի զօրուբ էհար
զկինն մէկ անգամ, ասաց կին՝ թէ լինձ ոչ
պիտի պատճառն այն . երդումն էառ
յանձն , թէ այլ ոչ հարցանէ զպատճառն
թէ ուստի է գանձն ։

Յուցանէ զառակս , թէ շատ մարդ կայ՝
որ զխորհուրդն կնոջն ասէ . նա կինն
զայրն 'ի գլխոյ հանել տայ ։ Եւ պարտ է
մարդոյն որ զնամ բարուէ առնէ կնոջն , զի
մի մարմին են . բայց զխորհուրդն ոչ յայտ-
նէ այսպիսւոյն ։

135 Ելք երկու սիրէին զմիմեանս յոյժ .
և եղև զի մինն գնաց 'ի գինարբուսան 'ի
մաճլիս , և միւսն ոչ էր անդ ։ Եւ իբրև՝
երեկոյ եղև , յիշեաց զսիրելին իւր , և գը

նաց

նաց առնա 'ի մանչին , և նա մեծարեաց յոյժ , և նատոյց առ ինքն ։

Եւ անդ քառասուն մարդ կայր , և ամէնքն գաւաթ եառուն , և սիրելին ոչ էր , զի ասաւ՝ թէ խիստ գինովցաւ , և խնայ էաց 'ի նա ։ Եւ յորժամ անկաւ 'ի գինւոյն , առեալ զնա 'ի շալակն՝ տանէր 'ի տունն իւր ։ Եւ ասաց՝ դու ով էս որ տանիս զիս . և նա ասաց՝ ոչ ճանաչես զիս էղբայրը , զի քարեկամ քո եմ ։

Եւ յայնժամ գիտաց որ սիրելին էր՝ և ասաց , թէ ամենեքեան ինձ գաւաթ եառուն , և դու էր ոչ եառուր ։ Այս ասելով՝ ծեծէր զգլուխ նոր մինչև 'ի տուն . և սիրելին ոչ եթող զնա , մինչև պառկեցոյց , և անկողնով ծածկեաց ։ Եւ երբ լուսացաւ , ասաց կնոջն զենէք զզուարակն՝ և բերէք որ զմեր սիրելին պատուեմք ։ Եւ նա խնացեալ զեղեալսն , ամաչէր . և անկեալ յոտս նորա թողուէ խնդրէր ։

Յուցանէ առակս , թէ այսպէս պարտէ հշմարիտ բարեկամի հոգալ զբարեկամն իւր ։

136 Լռանելին ասէր ընդ ձիթենին՝ թէ
ես կարմիր նուռն ունիմ. և աղէկ եմ քան
զքեզ։ Եւ ձիթենին ասէր ընդ նռնենին.
թէ ես պտղատու եմ, և ձէթ շնորհեմ
լուսատու մարդկան։

Յուցանէ նռնենին զթագաւորն, և
ձիթենին զքահանայն. քանզի թէպէտ և
գեղեցիկ է թագաւորն այլ ոչ աւելի՝ ի քա-
հանայն, զի քահանայն հալածէ զխաւարն
՝ի հոգւոց մարդկան։

137 Ղուկն յորժամ՝ ի ջրոյն՝ ի դուրս
ելանէ՝ նա մեռանի։

Յուցանէ, թէ մարդն որ՝ ի պատուէ-
րանացն այ՝ ի դուրս ելանէ, նա մեռանի
հոգին։

138 Ղուկն յորժամ՝ ի կեռն գայ և առ-
նու, նա մեռանի՝ ի ձեռն կարթին։

Յուցանէ, թէ յորժամ մարդն՝ ի մեղքն
երթայ և գործէ, նա մեռանի՝ ի ձեռն սա-
տանայի։

139 Մատաասէր ումն աղքատ՝ ունէր ծոյլ
որդիս. և՝ի ժամ մահուն կոչեաց զորդիսն,

և ասէ . ոչ որդեակք՝ բազում գանձ կայ պահեալ 'ի հարցն իմոց յայգին մեր . իսկ զաեղին ոչ ցուցանեմ ձեզ . այլ որ աշխատի և խորագոյն փորէ , նա գտանէ զգանձն ։

Եւ յետ մահուանն հօրն , սկսան որդիքն ջանալ մեծաւ աշխատութիւնբ , և խորագոյն վարէին . և ամէն մէկն ջանայր՝ զի ինքն գտցէ զգանձն ։ Եւ սկսաւ այգին աճիլ և զօրանալ , և եւ բազում պտուղ , և ելից զնոսա գանձիւ ։

Ցուցանէ առակս , թէ մեծ բարիք է աշխատանքն . և շատ օգուտ է՛ յայս կեանքս և յայն ։ Իսկ յոյլքն և ծոյլքն՝ ոչ ասա բարի ապրին , և ոչ անդ վայելէն . ոչ ասէ գիրքն , թէ յուլից և ծուլից փակեալ է դուռն արքայութեան ։

140 Եւ ասէ յառակաց , թէ այր մի զգայլն բռնեալ էր , և զոտներն կապեալ , և 'ի վերի լիշուն բարձեալ տանէր 'ի տուն . և մարդիկ 'ի դէմ դիպեալ ասեն , թէ այդ ինչ է որ լիշոյդ ես բարձեալ ։ Եւ ասէ այրն . թէ կուտանիմ 'ի տուն՝ որ կթեն , և իմ տըղայոց բերանն թանայ ։ Այնժամ ասեն արքն .

ով տխմար՝ դա զամէն աշխարհիս կԹան է հատուցեալ, զայդ կԹան կու տանիս։

Յուցանէ առակս, Թէ յիմարք զբարին և զչարն ոչ ճանաչեն. և՝ ի չարէն կը յուսան զբարիս ընդունիլ։

141 Ասի յառակաց՝ Թէ գայլ մի ելանէր՝ ի վր ոչխարաց, և սատաց խաղաղուի ընդ ձեզ։ Ասկ ծերագոյն խոյ մի յոչխարացն՝ ասէ ցընկերսն. եղբարք Թէպէտ խաղաղուիս աւետարանէ, բայց դուք ամէն մէկ ձեզ ճարարարէք։

Յուցանէ, Թէ ոչ ոմի պարտ է հաւատալ, որ բարեկամ ձևանայ. այլ խոհեմու Թիւ ճանաչել զԹշնամին, և զգուշանալ։

142 Ասի յառակաց, Թէ այր մի զէշ իւր կորուսեալէր, և խիստ աղեսալի՝ ի շուրջ գայր և խնդրէր։ Եւ տեսեալ գայլուն ասէ. այր դու զինչ խնդրես։ Ասէ այրն, ով գայլ՝ զիմ իշուկս կորուսեալ եմ, և չեմ գտնուլ։ Ասէ գայլն, ով այր՝ զքո էշն ես գտի։ Ասէ այրն, բէր զէշն՝ որ տամ զքո գտանելէն։

Այսպէս գայլն, ովայր դու՝ քո էշն 'ի չամ-
մուռն էր անկեր. և ես երբէք օր 'ի հետն
եմ դատել. և բազումս աշխատութիւնքս ապա-
կարացի 'ի դուրս քարշել, և'ի վարձին տեղն
զէշն կերի. գիտէի որ աղքատ մարդ էիր,
և ինձ վարձ չկարէիր տալ։

Ցուցանէ, թէ անիրաւ մարդն յորժամ
զրկանք առնէ աղքատին և տկարին, սուտ
և փուտ պատճառանքով կամի ծածկել զա-
նիրաւութիւն իւր, և արդար երևիլ։

143 Այսի յառակաց, թէ այրի ոմն ունէր
տասն այծս, և ունէր որդեակ մի. և որ-
դին այն յամէն օր տանէր արածէր զայ-
ծերն։ Եւ մայրն յամէն օր շերեփ մի ջուր
ընդ 'ի կաթն, և 'ի խափ տայր։ Եւ ասէ
որդին ցմայրն իւր. թէ էր առնես զայդ-
պիսադ, որ զջուրն 'ի կաթն ընուս, և'ի խափ
տաս։ Այսպէս մայրն. որդի՝ կաթնս քիչ է,
այնոր համար առնեմ թէ քիչ մի աւելի
լինի մեր կաթն. որ մեզ ձմռանս թացան
լինի և կերակրիմք։

Իսկ յաւուր միում մինչդեռ արածէր
մանուկն զայծիսն, փոքր մի ամպ ծնաւ

յեր

յերկինքն, և էին անձրև. և էլ հեղեղ, և
տարեալ զայծքան էլից 'ի գետն։ Իսկ մա-
նուէն էին յարևու առ մայրն դատարկ, և
միայն փայտն 'ի ձեռին։

Իսէ մայրն. որդի՞ ո՞ր են այծքն. և զի՞նչ
արդ յարևու էկիր այսօր։ Իսէ որդին,
մայրիկ իմ՝ այն շերեփ ջուրն զոր 'ի կաթն
խառնէիր, և 'ի խափ տայիր. նա ժողովե-
ցաւ, և հեղեղ դարձաւ. և էկեալ զմեր
այծերն տարաւ 'ի գետն էլից։

Յուցանէ առակս, թէ ոչ դատաստա-
նին արդար է. որ թէպէտ զկատարեալ
հատուցումն զլկողացն 'ի հանդերձեալն
պիտի առնէ, նա զչաշնին 'ի յայս կեանքս
կու հատուցանէ. զոր տեսեալ մարդկան
հաւատան, թէ գոյ հատուցումն 'ի հան-
դերձեալ դատաստանին. և առցէ իւրա-
քանչիւր ոք ըստ գործոց իւրոց։

144 Իսի յառակաց, թէ 'ի բաղդատ քա-
ղաքն հիւս մի ճարտար արուեստիւ՝ երեք
ամ աշխատեալ, և 'ի յամքրաւի կտէն սե-
ղան մի յիրեար ձգեաց զանազան յօրին-
ուածովք՝ որ ոչ էր տեսեալ ակն մարդոյ այն-

պիսի ինչ։ Եւ տարաւ Թագաւորի քաղա-
քին այնորիկ, և կարծէր թէ քաղաք՝ կամ
գիւղ՝ կամայլ ինչ պարգեւս տացէ նմա։
Իսկ ՆՐ տեսեալ զարմացաւ. և ուրա-
խացեալ էտ նմա հազար ոսկիսակս. և ՆՐ
առեալ զոսկիսակն, և ելեալ արտաքոյ դը-
րանն՝ նստաւ տրտուր, և կամէր 'ի յետ
առ Թագաւորն յուղարկել։
Եւ մինչդեռ տրտուր նստեալ էր 'ի դը-
րանն, եկն այր մի և ունէր 'ի ձեռին իւ-
րում սալայով մի վարդ. և տեսեալ զՀիւան
տրտուր, եհարց և ասէ. այր դու՝ ընդէր
ես տրտուր, զի՞նչ է պատճառն քո։ {}այն-
ժամ ասաց. թէ երեք տարի է՝ որ 'ի յամբ-
ռաւի կտէն չարչարանօք զսեղան մի շինե-
ցի, որ 'ի հազար հիւսէն մէկն չկարէ շի-
նել այնպէս. և բերի Թագաւորին՝ թէ ինձ
գիւղ կամ քաղաք մի տայ. նա զայս հազար
դրամն էտ. կուզեմ որ յետ ուղարկեմ։
Եւ այրն որ սալայովն վարդ ունէր՝ ա-
սէ ցՀիւան. դու ըղորդ ես. այս Թագաւորս
զփէշաքարի հարկիան չգիտէ։ Եւս այլ փէ-
շաքար եմ. և այսչափ տարի է յայս դուռնս
կու գամ, նա ինձ իրք մի չէ տուեալ։

Եւ ասէ Հիւսն ցվարդաբերն. դու ինչ
արուեստ գիտես. և նա ասէ՝ թէ զայս
սալայս ես կու զուգեմ։ Իսկ Հիւսանն հա-
նեալ զուրագն 'ի գօտւոյն, եդ 'ի վերայ միոյ
դիհաց մուրուճացն սալազուգին, և սրբեաց
մինչև 'ի վայր ոտ մաքրչով։ Եւ նոր մտեալ
առ թագաւորն այնպէս խախք դիմօք՝ տա-
ւրաւ զվարդն։

Ասէ թագաւորն, ով այր դու՝ ընդէր
այդպէս խայտառակ երեսօք եկեալ ես առ
իս։ Եւ նա ասէ, ով թագաւոր՝ այր մի 'ի
դրունս տեսի տրտում նստեալ. և հարցի
թէ վա՞ էր ես տրտում։ Ասա ասաց՝ թէ ե-
րեք տարի է՝ որ աշխատանօք 'ի յամբարաւ
կտէն սեղան մի շինեցի, և բերի թագաւո-
րին՝ թէ ինձ գիւղ կամ քաղաք տայ. նա
զայս հազար սպիտակս ետ. այնոր համար
եմ վերաւոր, և կուզեմ որ յետ ուղարկեմ։

Նա ասացի՝ թէ ես այլ փէշաքար եմ
թագաւորին. և թագաւորն ոչ ինչ փէշա-
քարի հարկիք չգիտէ։ Եւ էհարց՝ թէ
զի՞նչ արուեստ գիտես. ասացի թէ սալա և
քթոց կու զուգեմ. նա զուրագն քաշեաց
'ի գօտւոյն, զմէկ դեհի մօրուաս այսպէս

Եւ թագաւորն առ ժամայն կոչէաց զզ
հիւան, և ասէ. արդարև դո՞ւ արարեր ու-
րագով զայս մարդոյ մօրուան. և նա ասէ
այո։ Եւ ասէ թագաւորն՝ թէ երդու�՞իր
'ի գլուխս իմ, որ զմիւս դէհի մօրուացն
այլ ածցես նոյնպէս ուրագովն՝ որ էս տե-
սանեմ, և քեզ մեծ պարգև տամ։

Եւ եդեալ հիւանն զուրագն 'ի վերայ
միւս դէհի երեսացն, սրբեաց նոյնպէս։
Ասէ թագաւորն, թէ նստեալ դրեցէք
զգիւղն յորում ինքն կայ՝ ինքեանն մուրք
յազգաց յազգս. այնպէս արարեալ էառ
զդիրն, և դարձաւ 'ի տունն իւր։

Ցուցանէ առակս. թէ ոչ աստեղք զա-
րեգականն գեղեցկութի՞ փառաւոր ցու-
ցանեն. այսպէ՞ և փանաքի արուեստք զյարգ
և զպատուականութի՞ մեծամեծ արուեստ-
ացն յայտնի առնեն։

145 Ասի յառակաց, թէ այծ մի 'ի վերայ
բարձր պատին կայր նստած, և գայլ մի էկն
նստաւ յառակս պատին. Հայեցեալ ընդ-
նա այծն՝ ասէ. սիրաս կուզէ որ ինչնում'ի
վայր, և եղջերովս զայն գայլին փորն պա-

տառեմ։ Յայնժամ ասէ գայլն, երանի՛ էր
իմ աչացս որ տեսանէի՝ թէ այծն գայլը էր
ջերուին զեմ փորն պատառէր։

Յուցանէ առակս. թէ անիմաստ մարդն
զինքն կարծէ յաղթօղ գոլ մեծամեծաց.
քայց յաղթեալ՝ ի ձեռս նոցա անկանի. և
յայնժամ ճանաչէ զտկարութիւն իւր։

146 Լ։ սի յառակաց, թէ կին մարդոյն է
լեալ երեսի ջուր կայ. մէկ կուսուէ քօրն,
որ յառաջ քան զամուսնանալն՝ ի մօրէն ու
նի, և՝ ի ժամանակ ամուսնուէն քակի. զի
յետ այնորիկ, ոչ ասի աղջիկ՝ որ է կուսան։

Երկու՝ երեսի ջուրն, որ մինչդեռ զա
ւակ չէ ծնեալ. և յորժամ ծնանի զառա
ջին զաւակն՝ լուծանի կապ ծննդականու
թեան, և արձակեալ յառաջ քան զմանու
կն. որով յայտնի հրապարակաւ՝ ի լուր
ամենեցուն, թէ այս անուն նոր հարսն զա
ւակ ծնաւ։ Եւ նա այնուհետև առանց
ամօթոյ առեալ զմանուկն՝ ի գիրկ, և ե
լեալ նստի՝ ի հրապարակս. և քացեալ ըզ
կուրծսն և զստինսն՝ զամբէ մանկանն ըզ
կաթն, և ոչ ամաչէ.

Երեք երեսի ջուր կնոջն, քանի հետ առաջին առն 'ի ձեռն պսակին է կապեալ. և յորժամ հանդիպի, զի ելցէ յառաջին յառնէն, և լինիցի առն այլում, յայնժամ երեք կերպ երեսի ջուրն որ է ամօթն, քառնի յայնպիսի կնոջէն։ Եւ յայնմ հետէ վեր զի այլ ոչ ունի երեսի ջուր, ոչ ամաչի յումեքէ. այլ զոր ինչ կամի և կարէ՝ համարձակ գործէ։

Ցուցանէ առակս. թէ մարդոյս արգելք 'ի մեղաց՝ ամօթն և երկիւղն է. ըստ այնմ, թէ երկիւղիւ ան խորշի ամոքք 'ի չարէ։

147 Ասի յառակաց, թէ այր մի յամէն տարի հարիւր մոթ հաց վաստակէր, և այնու զտուն իւր կառավարէր։ Եւ 'ի մի ումն տարւոջ 'ի հարիւրէն քսան պակաս հաց եղև. նա անդադար հոգայր և կոծէր զինքն, թէ այսչափ հացովս 'ի նորն զիարդ կարեմք հասանել։ Իսկ ած յանդիմանել կամեցաւ զնա. առաքեաց զհրեշտակ իւր, և ասաց նմա. թէ արի՛, երկու մոթ հաց բարձիր, և տար կնոջ մի այրուց որ ունի դուստր մի միամօր։

Եւ նա բարձեալ գլուխսն տարաւ առ այրի կինն՝ թէ զհացս զոյս ած առաքեաց քեզ։ Եւ ասէ պառաւ կինն ցդուսար իւր։ արի՛ որդեակ՝ ա՛ռ զհացն զոր ետ առաքեաց մեզ։ Իսկ աղջիկն ասէ ցմայրն։ Ճաշոյ հաց կերեալ եմք։ և երկու բլիթ այլ կայ ՚ի սա՝ պատն որ երեկուանն ուտեմք։ և վաղուընանն պատրաստօղն ետ է։

Եւ ասացին մայրն և դուստրն ցայրն՝ որ զհացն էր բերեալ։ թէ ո՛րդի՝ տա՛ր զհացդ քո այլ ումեմն աղքատի՝ որ զաւուրս կերակուրն չունի, այդ աւելորդ է մեզ։ Եւ այրն զարմացաւ ընդ մեծահաւատուն կանանցն այնոցիկ։ և ինքն յամօթ եղև, որ զուրթսուն մոթ հացն ունէր։ և ասկաւին հոգայր և ցաւէր, թէ ՚ի նորն զիարդ կարեմք ելանել։

Յուցանէ առակս։ թէ ոք բազում ունին, և միշտ հոգան, թէ զիարդ պիտի ապրիմք, յանդիմանին յայնցանէ, ոք զաւուր կերակուրն մուրանալով գտանեն։ և միշտ գոհանան զայս, և ոչ յուսահատին։

մի գնաց մօտ մնագործն, թէ ինձ սակաւ
մի միս տուր՝ որ իմ տղայոցն տանիմ, որ ե-
լեն և ուտեն։ Իսկ մնագործն ընդ կատա-
կըս համարեալ, ետ նմա լիտր մի միս։ և
ասաց թէ իմ հօրն պատարագ արա։

Եւ երիցուն ճշմարիտ համարեալ է-
հարց զնա, թէ քոյ հօր անունն ի՞նչ է։
Եւ մնագործն ասաց, թէ իմ հօր անունն
Մկսար է, զոր ոմանք սադուրի կոչ անեն։

Եւ երթեալ երիցուն 'ի տուն իւր, և
տարաւ զմիսն տղայոցն։ և գնացեալ շի-
նեաց զպատարագն։ և յիշեաց զմկսարն
յանուն անէ 'ի պատարագն։ Եւ 'ի յաջո-
մանէն ՅՍ մնագործի կոչն արմատացաւ,
և ՅՍ առաստաղն խանութին պատառեալ,
բարձրացաւ և եղև ծառ մեծ։

Իսկ խանութապանն զարհուրեալ գնաց
անկաւ յոտս քահանային, թէ զոմ յիշե-
ցեր 'ի պատարագն։ Եւ նա ասէ, զմկսար
անունն՝ զոր դու ասացեր, թէ իմ հօր ա-
նունն մկսարէ։ Իսկ նոր զայս տեսեալ ա-
ղաչեաց կրկին պատարագել, և իսկապէս
զհայրն իւր յիշել։

Յուցանէ առակս. թէ մի՛ խաբէք, զի

զօրութիւն ոչ ունի արհամարհի, և ոչ տկարա-
նայ. այլ յամի զօրաւոր և սքանչելագործ-
ն է։

149 Ասի յառակաց, թէ ոմք երկու ընկ-
կերացեալք միմեանց, և քաղում ժամա-
նակս աղքատակերպ 'ի շուրջ գային 'ի վեր
երկրի։ Եւ յաւուր միումն եկին 'ի քաղաք
մի, և կամէին մտանել 'ի նա, և եկեալ 'ի
մին դուռն տեսին, զի գլուխ մարդոյ կա-
խեալ կայր ընդ դուռն 'ի վայր. և ոչ կա-
մեցան մտանել։

Ասացին թէ գնամք ընդ միւս դուռն
մտանեմք, որ գլուխ չէ կախած. և այնպէս
զամ դրուն քաղաքին 'ի շուրջ եկեալ՝ ոչ
գտին զդուռն, ուր ոչ կայր մարդոյ գլուխ
կախած. և անճար մնացեալ՝ մտին ընդ մին
դուռն 'ի ներս քաղաքին։

Եւ հարցեալ ընդ դռնապանն, թէ ինչ
պատճառ է՝ որ ձեր քաղաքիս յամէն դը-
րուն մարդոյ գլուխ է կախած։ Եւ նորա
ասէն, թէ այդ գլխանիդ՝ ամէնն օտար և
զարիպ մարդկանց է։

Եւ մինչդեռ նորա զպատճառն հարցու-

նէին , էհաս հրաւէրակ 'ի թագաւորէն՝ որք զղարիպ մարդիկն կոչէին. և զայն էր կու մարդն այլ տարան , թէ թագաւորն կու կոչէ։ Եւ յորժամ գնացին , թագաւորն մեծարեաց զնա , և եդ առաջի նց սեղան ամենալից , և պատուէաց զնա անուշահամ գինւով։

Եւ եղև կարիս միոյն 'ի նոցանէ , և էլ արտաքս վն կարեաց։ Յայնժամ ասէ թագաւորն ցայրն՝ որ 'ի տանն էր մօտ յինքն. թէ ահիտոս չէ՝ որ քո պիսի հարկաւոր մարդն հետ այնպիսի անբահտ մարդոյն շրջի , և քո լաւ անունդ վն դորա վատ անուն լինի։

Յայնժամ ասէ այրն , ոչ այդպէս է ոմ բարի թագաւոր , այլ այն ընկերն իմ այնպիսի թագաւորի որդի է՝ որ ձեզ վայելէ նորա հօր փառքն և թագաւորութիւնն . և վն այս սիրոյն՝ ամենևին թարկն տուէալ է , և աղքատի կերպով 'ի շուրջ կու գայ . և առ ժամայն ելն 'ի նեղս այրն , որ 'ի դուրս էր։

Եւ ժամ մի կացին , էլ և միւսն 'ի դուրս 'ի պատճառս կարեաց։ Եւ դարձեալ ասէ թագաւորն ցայրն որ 'ի մօտն էր . թէ կու թուէ ինձ որ հարկաւոր մարդոյ որդի էս ,

և թագաւորի զարմէ էս. ինչ պատեհ է՝ որ այդ ձմրի մարդն հետ քեզ 'ի շուրջ գայ, և զքո հարկաւոր անուանդ աւերէ։

Իսկ նա ասէ ցթագաւորն. գիտեա՛ զի թէ թագաւորի որդի եմ, և թէ իշխանի, և կամ զինչ և իցէ մարդոյ. իմ հօր տունն՝ դորա հօր թափոնն է շէն կացեր, և յա՛յ 'ի վայր, մեզ երախտաւոր դոցա ազգն է։

Իսկ թագաւորն առ ժամայն ետ նոցա երկոցունց զատ՝ մէկ ձի սարօքն հեծնելոյ, և մէկ քօթալ, և մէկ ծառայ, և շատ արծաթ և ոսկի. և ուչ ապան զնա՝ այլ խաղաղութիւն ուղևորեաց, որք գնացին զՃանապարհն Իւրեանց։

Եւ Իբրև հարցին ցթագաւորն, թէ ընդէ՞ր զայլ զարիպան ապանանէիր. ասէ՝ վա՜յ զի այլ զարիպ մարդ չգտայ՝ որ միմեանց լաւ էին ասացեալ, վա՜յ այն ապանանէի զնա. և սոքա որ միմեանց լաւ ասացին խալաթեցի, և հարկաւոր ուղոյ դրի։

Յուցանէ առակս. թէ որք զընկերս Իւրեանց առաջի օտարաց չարաբանեն, ինքեանք ընդ նոսին պարսաւին, և 'ի պատուէ՛ն և 'ի գլխոյն ևս էլանեն. ըստ այնմ, թէ որ

արհամարհէ զընկերն՝ արհամարհի և ինքն
'ի նմանէ . և որ զընկերն առաջի օտարաց
բարեբանէ , ինքն գտանէ զշահն և զօգ-
տուն , և ապա ընկերն ։

150 Լսի յառակաց , թէ այր մի խիստ
պարտական էր , և ոչ ինչ ճար չունէր ազա-
տելոյ՝ և խիստ հոգայր , և նեղեալ 'ի պար-
տատիրացն։ Եւ յաւուր միում ասէ մի ոմն
'ի պարտատիրացն ցնա . Էս քեզ խրատ մի
տամ որ յամենեցուն պարտուցն ազատիս ,
ապա զիմ պարտքն վճարէ ։ Ասէ ցնա պար-
տականն , թող ած վկայ լինի , որ զքոյն
վճարեմ . դու ինձ ճար մի արա՝ որ զայլոց
պարտն վճարեմ։

Ասէ խրատատուն , թէ ով որ գայ 'ի
քէն պարտք ուզէ , դու ասա՛ թէ խամ, և
այլ ոչ ինչ մի՛ ասեր ։ Յայնժամ պիտի առ-
նուն զքեզ դատաւորի մօտն տանին . դու
առաջի դատաւորին այլ ինչ մի՛ ասեր , քայց
միայն ասա՛ թէ խամ։ Ասկ դատաւորն պի-
տի ասէ , թէ այդ մարդդ խև է և յիմար՝
յո՛ւմմէ կուզէք զպարտն , թողէ՛ք որ դնայ
յիւր քանն . և այնպէս պարտականն ազա-
տեցաւ 'ի պարտուցն ։

Եւ եկեալ խրատուու պարտատէրն՝ ա-
ռէ ցպարտականն. այժմ որ ազատեցար իմ
խրատովն, բէր զիմ պարտն տուր. Նա նը-
մանապէս և նմա ասաց խամ։ Իսկ նոր ա-
ռեալ զնա գնաց առ դատաւորն քաղաքին.
և սկսաւ դատաւորն հարցանել զնա, թէ
այդ մարդն ասէ. թէ յիսուն կոտոր լուսա-
ցած հաճար պարտի ինձ տալ. զինչ ասես,
պարտիս թէ ոչ։ Եւ նա սկսաւ ըստ ա-
ռաջնոյ պատասխանւոյն և ասաց՝ թէ խամ։
Այնժամ ասէ պարտատէրն ցնա, թէ լը-
ւացած չկայ թող խամ լինի ընդ քո բա-
նիդ. և այնպիսի ճշմարտութիւն է նման
նէ զպարտան։

Յուցանէ. թէ անիրաւութիւն առնօղն ոչ
միայն 'ի հանդերձեալ դատաստանին պիտի
խայտառակի. այլ և յայս կեանքս ամօթա-
պարտ և խայտառակ լինի առաջի մարդկան։

151 Ասի յառակաց, թէ երկու արք մի-
մեանց յոյժ բարեկամք՝ գնացին 'ի ճանա-
պարհորդութիւն. և մինն ննջեալ 'ի վաճառն,
և միւսն շահեալ, դարձան և գային
տունս իւրեանց։ Եւ յորժամ մօտեցան 'ի

քաղաքն, ասէ աղքատ ընկերն ցհարուստն.
Եղբայր՝ շատ բարուութիւն և սէր գիտեմ 'ի
քէն, նա ամենեցուն գլուխն այս է՝ զոր
ինդրեմ 'ի քէն, և 'ի վերայ է քան զամենն.
պիտիր որ ինձ եղբայրութիւն առնես՝ հազար
ոսկիտակ փոխ տաս ինձ. որ այս տարի զիմ
տանն, և զիմ տղայոց պէտքն ընում. և յայլ
տարի յայս օրս զքո դրամն վճարեմ. այն-
պէս հաշուեցաց՝ թէ զիմ տղայն 'ի գերութէ
գնես քո հոգւոյդ համար։ Իսկ նոր լուեալ
զայս՝ պարզամտութեամբ ետ հազար դրամն
խղճալով աղքատութեանն. և ելեալ 'ի տեղ
ոջէն գնացին 'ի տունս իւրեանց։

Եւ իբրև լցաւ տարէգլուխն, երթեալ
տուօղ դրամին առ պարտականն՝ և ասէ.
տարի մի բոլոր եղև, հիմայ զիմ դրամն
տուր՝ որ իմ տանն, և իմ տղայոց պէտքն
հոգամ։ Իսկ նոր պատասխանի տուեալ ա-
սէ. ես քեզ դրամ չպարտիմ։ Եւ յոր-
ժամ բռնադատեաց՝ ասէ ցնա, Եկ որ եր-
թամք 'ի դատաստան առ դատաւորն։

Եւ յորժամ եկին, ասէ դատաւորն,
զդրամն առեալ ես թէ ոչ. և նա ասէ՝ ոչ.
և ասէ, թէ վկայ և գիր ունիս։ Եւ իբրև

գիտաց թէ ոչ գրով զդրամն էր տուեալ,
ասէ, թէ յայն տեղն ուր եւտուր զդրամն
'ի դա՝ մարդ կայր 'ի մօտն, գրաստ կայր,
ձի կայր։ Ասէ տուօղ դրամին, թէ ոչ ինչ
չկայր 'ի մօտ մեզ. 'ի վերս ահծ էր, և 'ի վայր
մեք երկուս, սա ողբելով ինդրեաց, և ես
խղճացի և եւտու. այժմ ուրանայ։

Ասէ դատաւորն, 'ի յայն տեղն ծառ
կայր, թուփ կայր, քար կայր. ինչ տեղ էր
այն տեղն։ Ասէ դրամի տէրն. ոչ ծառ կայ
և ոչ թուփ՝ լոկ քարատակ մի է. Նատաք
անդ, համարեցի և եւտու յինքն, և ելեալ
եկաք 'ի միասին 'ի քաղաքն. դա գնաց յիւր
տունն, և ես յիմ տունն։

Ասէ դատաւորն ցդրամին տէրն. կա-
ցեա զքարն զայն բերել. կամ կոտրել 'ի
յայն քարէն, և նշան բերել։ Իսկ նը 'ի
դուրս վազեալ 'ի դրամին կսկծոյն՝ թէ
գնամ զայն քարն լծօք բերեմ, կամ կոտ-
րեմ և նշան բերեմ։

Եւ յորժամ գնաց նա, ասէ դատաւորն
ցմիւսն՝ որ 'ի մօտն մնաց, թէ կարէ՞ զքարն
շարժել 'ի տեղեացն, կամ կարէ՞ կոտրել և
նշան բերել։ Ասէ՝ որ ուրանայր զդրամն.

թէ զհազար լուծք լծէ՝ չկարէ զայն քարն
շարժել՝ի տեղեացն. և թէ հազար քարա-
գործ ըներէ՝ չկարէ կտոր մի կոտրել՝ զի ա-
պառաժ քար է։

Յայնժամ դարձուցեալ զայրն՝ի յեռա՝
որ գնայր. և ասէ ցուրացօղ դրամին, թէ
գնա՛ և տո՛ւր զիւր դրամն յինքն, զի դու
եղեր վկայ՝ որ պարտիս. և այնպէս յամօթ
եղեալ վճարեաց զպարտան։

Յուցանէ առակս. թէ դատաւորն այն-
պէս պարտ է լինիլ, որ՝ի դատաստան առ-
նելն՝ ըանին ելք գտանէ. և զիրաւունքն
այլ չթողու. ըստ այնմ որ ասէ սաղոմոն. որ
հանճարեղն ի՝ցէ, զառաջնորդուն ստացի։

152 Ի՛նչ յառակաց, թէ միակէց մի ընդ-
ստանայի ուխտ էդ, որ տարի մի՝ի պահս
կենայ՝ էթէ զնա՝ի մեծուն հասուցանէ.
և ստանայ յանձն էառ կատարել զինդրը-
ուածս նորա։

Յորժամ վճարեաց զպահն, շարժեաց
ստանայ զեպիսկոպոս քաղաքին, որ էդ զնա
եկեղեցպան. և՝ի միւս տարուոջն շարժեաց՝
որ օրհնեաց զնա աբեղայ. և՝ի միւս տարը-

ուրջն եղև Մեռանիլ եպիսկոպոսին՝ շարժեց զթագաւորն և զքաղաքացիսն, առնել իւր ըստ նոցա եպիսկոպոս։

Եւ յորժամ կամէր զգեստաւորիլ՝ զի ժամարարացէ, էկն սայն՝ ետ 'ի նա փոքրիկ չորեքաղի մի՝ և ասէ. Իմ ամենեն լաւի փոխարէն՝ որ զքեզ յայդ մեծագոյն աստիճանդ հասուցի, զայս արա՛. ա՛ռ զայդ փոքրիկ չորեքաղիդ 'ի ծոցդ դիր, և զզգեստդ 'ի վերայ հագիր. և յորժամ 'ի բեմն ելանես, նա մեկ մատամբդ 'ի վերայ մեկ լարին զարկ։ Եւ պատրեալ եպիսկոպոսին արար այնպես. և յանկարծակի հազարք հազարաց և բիւրք բիւրոց տանջաղաց, և թմբկի, և սուռնայի, և չանկի, և չորեքաղաց ձայն հնչեաց 'ի մէջ եկեղեցւոյ։

Զարհուրեցան թագաւորն և ժողովուրդն՝ և ո՛չ զոք տեսանէին հարկանօղ նուագարանացն։ Զրամայեաց թագաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ և զիւրաքանչիւրոք մերկացուցանել և փնտռել. և այնպէս արարեալ ո՛չ զոք գտին պատճառ։

Եւ մնաց թագաւորն և եպիսկոպոսն միայն. թագաւորն ևս մերկացաւ, և ո՛չ

գտաւ առնալ ինչ. և յորժամ մերկացու-
ցին զեպիսկոպոսն, գտին 'ի ծոցն զչորեքաղին զայն։ Եւ 'ի չարչարանս արկեալ՝ խոստուվան եղև զուրացուին, և զդաշինս զոր եդեալ էր ընդ սատանայի։

Յայնժամ կապեցին զնա 'ի յաղի ամենի ձիոյ՝ և թողին 'ի դաշտի. մանրամանանաբար կոտորեալ եղև մարմին նր. և այնպէս աւանդեաց զդառնացեալ հոգին 'ի ձեռն սատանայի։

Յուցանէ առակս. թէ ով որք սէր ունայի բարւոյն, և ուխտին հաւատայ՝ բաժին նր վերջն այնպէս լինելոց է։

153 Սէր յառակաց, թէ կայ կենդանի մի՝ որ լուծանայ զորոյնն. և երթայ ննջէ 'ի ծերպս վիմաց մինչև 'ի մուտ գարնանային ժամանակաց. և թէ սակաւ կերակուր մնայ 'ի վորին, նեխի կերակուրն՝ և ապականէ զինքն։

Յուցանէ առակս. թէ ոմն մարդ՝ որ թէ սակաւ մեղք մնայ առ քեզ առանց խոստովանութեան և ապաշխարութեան, և ընդ քեզ ինչանէ 'ի դերեզմանն. նա յօրն վերջին 'ի

հուրն առաքէ զքեզ՝ և տանջէ։

154 Սէր յառակաց, թէ ժողովեցան թռչունքն, և ընտրեցին զարտուտն, և օձին և եղին իւրեանց թագաւոր. զի չէ՛ գիշակէր, և է արթուն և սաղմոսասաց։ Եւ սկը սան՝ի գնալ. և եկին՝ի գեղջ մերոյ սահման. և մանկունքն եղեալ էին որոգայթս վերա ձագուց. և արտուտն յանց մինչ անցանէր՝ էառ զհատ ցորենոյն. և բախտն անկաւ՝ի պարանոցն, և անշնչացաւ։

Եւ եկեալ զօրքն հանին զբախտն, և ասեն. ո՛վ բարի թագաւոր՝ իմաստուն և սաղմոսասաց, զինչ է այս որ պատահեցաւ քեզ։ Եւ նա ասէ, գիտացի՝ զի ագահութիւն տարաւ զխելք իմ, քանզի խորհեցայ ծածկաբար ուտել զցորեանն, զի մի՛ տեսցէ ոք՝ի զօրացս։

Յուցանէ առակս. թէ բազում սուրբ կարգաւորքք և առաջնորդք կորնչին վասն ագահութեան և արծաթասիրութեան. և այնու գայթագղէցուցանեն զմիտս տխմարաց՝ և լինին ողորմելիք։

155 Սէր յառակաց, թէ այր մի գնաց

առ դատաւորդ քաղաքին , և խոստացաւ և ասէ , թէ քեզ ըղձուղի իւղ տամ։ վաղիւն յորժամեա և ոտին իմ առ քեզ գամք , զկնա իրաւ արա 'ի դատաստանին ։ Եւ 'ի միւս աւուրն յորժամ ելին 'ի դատաստան , դատաւորն զիւղոյն տուն օրն իրաւ արար , և գրեաց զդէրն հաստատութեամբ ։

Եւ գնաց այրն որ զիւղն խոստացաւ , ելից զբղուղի։ յարդուլ մինչև 'ի ձին , և 'ի վերայ յարդին երկու և երեք շերեփ իւղ եդ , և զբերան բղղին սերեկեաց ։ և եբեր առ դատաւորն , և գնաց ։

Եւ յետ սակաւ աւուրց ասէ դատաւորն ցսպասաւորն իւր։ թէ սիրաս իւղով բերինձ կուզէ , բե՛ր զայն մարդոյ բերածիւղն , և բերինձ տուր ։

Իսկ նա վառեալ կրակ , և եդ զթաւայն 'ի վերայ կրակին ։ եբեր զիւղն յառաջ՝ եբաց և էզարկ զդգալն 'ի բղուղն , նա յարդն 'ի դուրս վազեաց ։ Իսկ նա աղաղակեաց , թէ զբղուղն իւղով բերին , նա յարդ է դարձեալ ։ Այնժամ իմացաւ դատաւորն և ասաց , թէ այն մարդն զիս խաբեաց ։ ես փոխարէն նորա հանեմ ։

Եւ յաւուր միում այն մարդն դատաւորին դանուին անցանէր. և տեսեալ դատաւորին զայրն զայն՝ ասէ. ով այր դու, զքո դատաստանին գիրն զոր այն օրն է՝ ասու՝ պակաս կայ՝ ի նեռս, քէ՛ր ընում, խեղճ էս. որ յետոյ այլ քո դաւընկերն չգայ ըզքեզ՝ ի դատաստան քարշէ՝ և զքեզ ատէ։ Նէ՛ ասէ այրն, ով դատաւոր՝ թէ պակաս կայ՝ ի՛ բղուղնէ, թէ չէ՞ յիմ գիրն պակաս չկայ. և այնպէս յամօթ եղև կաշառօք դատաստանն նորա։

Ցուցանէ առակս. թէ ով որ կաշառօք դատաստան առնէ, կամ յայս կեանքս ոմի տի խայտառակի կամ՝ ի հանդերձեալն։

156 Նէ՛ յառակաց, թէ թագաւոր մի կամեցաւ աշտարակ շինել. և քանի ցերեկն շինէին՝ գիշերն՝ ի փուլ գայր։ Եւ ժողովեալ զգիտունս իւր էհարց զպատճառն. և նոքա ասեն, թէ կամիս որ այլ չփլչի, դու ընտրէ տգէտ մարդ մի՝ որ քան զինքն տգէտ չլինի, և՝ ի ձէջ որմին դիր կենդանի. և՝ ի վերայ ած՝ որ շէն մնայ։ Նէ՛ թագաւորն՝ զայդ քանի ընտրուելոյ այլ դուք արարէք,

թէ

թէ յինչ հարաքաթ կայ 'ի տգէտ մարդն,
և քերէք որ տամ դնել 'ի մէջ որմին։

Իսկ նց նատեալ 'ի միասին խորհուրդ
առնէին, թէ յինչ տեղ գտանեն տգէտ։
Եւ ոմն ասաց ձկնորսն գոլ տգէտ. որ հետ
մարդոյ չէ՛ նորա առնուլն և տալն, այլ 'ի
ջուրն՝ և 'ի հետ ձկանց։ Իսկ ոմանք ասա-
ցին, թէ պահակն՝ որ հետ իշուն կենայ,
և զիւր կեանքն 'ի մայրին և 'ի լերինն հետ
գրաստուն անցուցանէ։ Ոմանք զծովավարն
ասացին. իսկ ոմանք զհովիւն՝ որ 'ի լերինա
զամառն և զձմեռն հետ ոչխարացն շրջի,
'ի գիւղ կամ 'ի քաղաք ոչ մտանէ։ Եւ հա-
ւանեալ կամեցան քերել զհովիւն։

Յայնժամ ասէ մի ոմն 'ի նոցանէ. թէ
թագաւորիս մերոյ է հովիւ մի, որ 'ի լեառն
է ծնեալ հետ ոչխարացն, և անդ է մնեալ
և զիւր ժամանակն ո՛չ 'ի գիւղէ մտեալ՝ և
ո՛չ 'ի քաղաք։ Եւ յուղարկեցին տասն ձի-
աւոր՝ զի քերցեն զայրն. և նոքա գնացեալ
գտին զհովիւն, զի կթէր զոչխարսն. և
ողջունեալ ասին՝ կոչէ զքեզ թագաւորն։
Ասէ հովիւն. ես զիմ ժամանակս ո՛չ 'ի
քաղաք եմ գնացեալ և ոչ 'ի գիւղ. զիս զի-

ամրդ կոչէ. և նորքա ասեն պատճառանօք՝ ոչ գիտեմք։ Իսկ նոր պատուէր զզօրականսն, և զգառն մի զենեալ, և պանիր մածուցեալ, ուրախացոյց զնա. և երդմամբ էհարց զպատճառն կոչելոյն։ Իսկ նորքա ասեն՝ թէ այսպիսի պատճառաւ կոչէ ըզքեզ. զի իմաստուն նոր ասացին, թէ մի տգէտ 'ի մարդկանէ դնեն յորմն, որ շէն և հաստատուն մնայ։

Յայնժամ ծիծաղեցաւ Հովիւն, և ասէ. յիմար և տգէտ այն իմաստունքն են, որ զայդ ընտրուիդ են արարեալ։ Նուբերեալ զոչխար մի՝ ասէ. ես ցուցից ձեզ ըզտգիտութիւն իմ. և ասէ, ոչխարս այս երկուս գառինս ունի 'ի փորն. մինն էգ է, և միւսն որձ. միոյն գլուխ սեաւ, և միոյն սպիտակ. և զենեալ զոչխարն և եհան զգառինսն 'ի փորոյն. և էր այնպէս ոչ ասացն։

Նուբերեալ ոչխար մի ևս ասէ. ոչխարս այս մէկ գառն ունի 'ի փորն. անձն սեաւ՝ և գլուխն սպիտակ՝ և ինքն որձ. և զենեալ տեսին այնպէս։

Նա ասէ Հովիւն, զայս երկու երամս ոչխարաց որ կայ ձեր առաջի, զամենն գիտեմ,

ատեմ, թէ ո՞րն է՝ որ ծնանելոյ է, և ո՞րն է՝
որ ստեղծէ. ո՞րն է՝ որ որձ ծնանի, և ո՞րն
է՝ որ էգ. և ո՞րն սեաւ կամ սպիտակ, կամ
ո՞րն խայտախարի. ձեր գիտութիւնքն կարե՞ն
դիտել զայս. ասեն զօրականքն, ոչ ամենևին։

Ա՛յսէ հովիւն, ապա գիտացէք որ ես չեմ
այն տգէտն և յիմարն՝ զոր դուք ենդրէք.
այլ թէ կամիք՝ ես ցուցանեմ։ Թռչուն թա-
գաւորն զիւր նայիպն բռնէ, թալանէ, և
զինչ ունի զամէն առնու. և 'ի մէջ քաղա-
քին, 'ի հրապարակին չարաչար տանջէ՝ որ
ամէն քաղաքացիք տեսանեն. և տանին թա-
գաւորացուցանեն և ասեն, թէ սպանեցին. և երեք
օր 'ի քաղաքն կանչեցնեն, թէ զինչ մարդ որ
գայ՝ զայն նայիպի գործն 'ի յանձն առ-
նու, և 'ի նր տեղն նստի, նր զամէն ապ-
րանքն այն մարդոյն տանք։

Ա՛յն մարդն, որ զայն ամէն խաղքու�
տեսանէ և լսէ՝ զոր յայն նայիպին գլուխն
անցուցին. և յառաջ գայ թէ ես լինիմ
թագաւորին նայիպ, այն մարդն է յիմար
և տգէտ. զայն բռնեցէք՝ 'ի մէջ որմին դրէք
կենդանի, որ այլ չի վնասի, և 'ի շէն մնայ։

Իսկ նոքա եկեալ պատմեցին թագաւոր-

ին. և Թագաւորն տրտրեալ այնպէս, ե-
գիտ զայրմի՝ որ մինչդեռ կանչեցնէին 'ի
քաղաքին՝ թէ ով գայ զայն նայիպին զիշխա-
նութին և զգործն յանձն առնու, զնորա
ապրանքն և զհայրենիքն նմա տամք։

Յայնժամ Ջրմի և Թանի այրմի յա-
ռաջ վազեաց և ասաց. թէ ես յանձն առ-
նում զայն նայիպութին. և հարցին ցնա,
թէ տեսեր ընդ այն նայիպին հետ ինչ տ-
րարին. նա ասէ, այո՛ տեսի. քայց ես այլ
աղէկ առնեմ, որ զերդ զայն չլինիմ։ Լու-
նց առեալ վաղվաղակի՝ տարեալ եդին կեն-
դանի յորմն շինուածոյն. և հաստատուն
եկաց շինուածն։

Զուցանէ առակս. թէ ոք զընկերն տե-
սանէ 'ի գործ Թագաւորի կամ մեծամե-
ծաց ձեռն անկեալ՝ և այնու պատճառաւն
'ի յաղքատութի և 'ի տուգանս անկեալ. և
ինքն յանդգնեալ 'ի նոյն գործն ձեռն արկ-
կանէ, նման նմա լինիցի, և 'ի կենացն ևս
զրկեսցի։

157 Լ։ սի յառակաց, թէ երկու տգիտք
կռուէին 'ի մէջ փողոցին. և մէկն յաղթեաց

ընկերին, և ձգեաց զնա. և հպարտացեալ
ընդ իւր անձն՝ էլ՛ի բարձր տանիս. և սկսաւ
կարկաջել՝ և ձայնել բարձր, որ յաղթեաց
ընկերին։ Եւ ահա արծուի մի՛ ի վերուստ
էառ զինքն, և վերացաւ յօդս երկնից։

Ցուցանէ առակս. թէ որ ինդայ՛ի
կորուստ թշնամւոյն իւրոյ, և ուրախանայ
հպարտութեամբ, թէ յաղթեցի ընկերին. գայ
՛ի վերայ նոր նեղութի՛ յանկարծակի, որ վայ
տայ իւր անձինն. ոչ և տէրն սատ. թէ
որով չափով չչափէք, չափեսցի ձեզ։

158 Լսի յառակաց, թէ աքլորն օթեր
էր՛ ի ծառ մի, և՛ ի մէջ գիշերին սկսաւ
փառաբանել զՅն. և աղաղակէր անտանելի
ձայնիւ։ Ոչ էաւ աղուէսն, և գայ առ
աքլորն և ասէ, եթէ քահանայ՝ էլ՛ ի ծառէդ
՛ի վայր՝ զի այսօր ասն է մեծի եթէ կարապե
տին. և փիլիսոփայ չունինք, որ կատարենք
զասնս։ Ասէ աքլորն սակաւ մի համբերեա՛
մինչև գայ քեռին իմ, որ Հանդիսիւ ասն
կատարեմք։

Եւ իբրև առաւօտ եղև, ելին՛ ի գիւ
ղէն շուն մի, և յանկարծակի բռնեաց զաղ

ուէան և նա այլ ըն այլ ձայնէր և գուայր։
Այսէ աքլօրն, վայ ինձ՝ թէ այդպիսի գաղ-
շելի ձայնիւդ կամէիր կատարել զտօն մե-
ծի ՅԵՐ կարապետին։

Յուցանէ առակս. թէ որ ջանայ նեն-
գել ընկերին իւրոյ, ինքն անկցի յորո-
գայթն. ոչ ասէ դաւիթ. գուբն զոր փո-
րեաց, 'ի նոյն անկցի։

159 Այսի յառակաց, թէ ժողովեցան ե-
րեսուն նապաստակք, խորհուրդ արարին
և ասացին. թէ եկայք, երթամք ամենքս
միաբան անկանիմք 'ի ծովն, որ ազատիմք 'ի
յայս դառն կենացս. զի կարի տկար է ըս-
տեղծեր զմեզ ՅԱԾ. թէ գազանք են՝ թէ
հաւք են զմեզ ուտեն. լաւ է որ մեռանիմք՝
քան այս կենօքս ապրիմք։

Եւ 'ի գնալն իւրեանց տեսին շատ գոր-
ծունա. և ՃԻՉ բարձեալ գորտանցն փա-
խեան, և անկան 'ի ջուրն և թաքեան. և
նապաստակքն գոհացան զՅԱ, զի տկարք
տեսին քան զինքեանս։

Յուցանէ առակս. թէ մի՛ հայիր 'ի
մարդն՝ որ բարձր է քան զքեզ՝ և յուսա-

հատիր. այլ հայեաց 'ի տկարն և յաղքատն՝
և մխիթարեաց. և թէ մեղաւոր ես, մի՛
հայիր 'ի կարի արդարն՝ և անյոյս լինիր.
այլ յուսով դիմեա՛ առ ած, և փրկիս։

160 Լսի յառակաց, թէ 'ի տօնի զատկին
էկին թռչունքն առ, և խոստովանէին ըստ
օրինացն. էկին ընդ նա սակաւ մի և հողա-
մաղք, խոստովանէին քահանային՝ թէ չէմք
մեղուցեալ. բայց զի որսացաք զմուկն և
զգորտ, և կերինք. և նա մերժեաց զնոսա
պիղծս կոչելով։ Նա նց երթեալ ստացան
գանձս բազումս, և տարեալ մատուցին
քահանային. և այնու արդարացոյց զնա ա-
սելով ոչ գիտացիք խոստովանիլ՝ զի այն
ձեզ նման թռչունք են, և հաղորդեաց զնա։

Ցագահ քահանայից առակս նշանա-
կէ. զի զպոռնիկս և զայլս մերժեն յեկե-
ղեցւոյ, և դարձեալ ընդունին կաշառօք։

161 Լսի յառակաց, թէ քուն որ է քայ-
ղուշն՝ հրեշտակ առաքեաց արծուին, և
խնդրեաց զդուստր նր Հարան, և ասէ՝ դու
տուն ջեան քաջամարտիկ ես, և ես գիշե-
ցոյ. պատշաճ է մեզ խնամուի. և արծուին

յանձն էառ տալ։ Եւ ՝ի լինել հարատ-
նեացն, ՝ի առնէ լոյս ոչ կարէր տեսանել
փեսայն, և ՝ի գիշերի հարան. և ծաղը առ-
նէին զնա քաղէքն. և լուծաւ հարսանիքն։
Յուցանէ առակս. երբ հաւատացեալ
մարդ զդուստր իւր տայ այլասեռի խա-
ւարացելոյ ՝ի լուսոյ, այսպէս լինի։

162 Զ. Յր մի գնալով ՝ի ճանապարհի՝ հան-
դիպեցաւ արանց՝ որք զՃոպանս կապեալ
էին ՝ի քուն վէմ մի, զի շարժեսցեն զվէմն
և առ ինքեանս քարշեսցեն. բայց յամե-
նեւնց կողմանց քարշէին, կամելով իւրա-
քանչիւրոք առ ինքն քարշել՝ և իւրացու-
ցանել. իսկ քարն ամենևին անշարժելի
մնայր և անխախտ։

Զ. սէ այրն, ով մարդիկ՝ եթէ կամիք
շարժել զդա ՝ի տեղւոջէ իւրմէ, ՝ի միոջէ
կողմանէ քարշեցէք զի շարժեսցի. քանզի
յամէն կողմանէ քարշելով՝ զդա շարժել
անհնարին է։ Բայց նոքա ոչ կամեցան լսել
նմա. այլ յամառեալ քարշէին ըստ սովո-
րութեան իւրեանց. վասն որոյ քարն մնայր
անշարժ։

Յուցանէ • վէմն է ինքն քո՝ ըստ գա-
նիէլի և պօղոսի • իսկ քարշողքն առ ին-
քեանս քրիստոնեայք , զի իւրաքանչիւրոք
ազգ քրիստոնէից կամի հակառակուիք ըզ
քո առ ինքն քարշել՝ այսինքն իւրացուցա-
նել • քայց քո անշարժ մնայ՝ և ոչ առ միոք
գնայ • քանզի քո ոչ կամի զհակառակութի-
ւն զընդդիմութի հաւատացելոց իւրոց , այլ
զսէր և զմիաբանութի նոցին , որովք շարժի
քո առ նոսա ։

163 Լսի յառակաց , թէ ժամանակաւ
մարդ մի կայր հռոմայու երկիրն , որ կու-
պարծենայր թէ քիմիական գաղտնի ար-
հեստ գիտեմ, և արծիւն ոսկի կը շինեմ ։
Եւ այս քանիս վրայ գիրք մի շարադրեց ,
և այն երկրի թագաւորին յուղարկեց , յու-
սալով որ վնաս խաբէ , և շատ ըստակ փըր-
ցընէ ։

Այց թագաւորն խելացի մարդ մի էր ,
գիրքն կարդալէն յետո՝ մեկ մեծ դա-
տարկ քսակ մի ուղարկեց մեկին ձեռքն՝
և ասաց , թէ գնա՛ զրուցէ այն մարդուն ,
որովհետև աղէկ գիտէ ոսկի շինելոյ ար-

հեատն, եւ այնոր այլ ուրիշ ընծայ արժան չի տեսայ ուղարկել, բայց միայն այս մեծ դատարկ քսակս, որ իւր շինած ոսկիքն ստրա մէջն լեցուն է։

Ռաբակս խրատէ. ով որ կասէ՝ թէ արհեստով գնական ոսկի կը շինեմ, խաբեբայ է այն մարդն. ուրիշին ոսկին իւրեան քաշել կուզէ, և զնա փոխացընել. իմաստուն և խելացի եղօղն չի խաբվիր, այլ ծաղր և խայտառակ կառնէ զայնպիսի խաբեբայն։

164 Ինչանի գինեմոլ մի, որ ջուր բը նաւ չէր սիրէր, միշտ կը պախարակէր. ամէն օր ջրոյ տեղ գինի կը խմէր։ Նա եղև, որ այս մարդն ջերման ցաւով սաստիկ հիւանդացաւ. բայց որովհետև ուրախասիրտ և զուարճախօս մարդ մի էր, բարեկամքն իւր ոչ թողուին զնա միայնակ, միշտ գային 'ի տեսուչի և յուսադրէին։

Նա եղև յաւուր միում, որ ջերման սաստիկ տաքութիւն զինքն կայրէր, ասաց իւր սպասաւորին, թէ ամանով մի լեցուն պաղ ջուր բեր որ խմեմ, և սիրտս զովանա և պաղըշկի։

Յայնժամ բարեկամքն՝ որ նստեալ էին
անդ , և զիտէին որ Ջրոյն Թշնամի էր և
միշտ կու ապախարակէր , սկսան նայիլ յե-
րեսս միմեանց և քմծիծաղ առնել։ Ման-
ցաւ հիւանդն որ Ջրոյն համար կու խըն-
դան , դարձաւ ասաց իւր բարեկամացն։
Ի թէ՞ ոչ գիտէք , թէ մարդս 'ի ժամու
մահուանն պէտք է որ հաշտի իւր թշնա-
մեաց հետ։

Ցուցանէ առակս . թէ ուրախասիրտ
մարդն՝ նաև 'ի մեռանելոյ ժամն զուարճ-
ախօս լինի . զի ոչ իմաստասէրքն ասեն ,
թէ սովորութի հնացեալ փոխի 'ի բնութի։

165 Ա մարդապետ ոմն Իտալացի յաւուր
միում եկ յատեան . և քարոզ տայր ժողո-
վրդոց 'ի վերայ հրաշագործութեան քի . և
բանն բերաւ այն տեղն , որ պիտի ասէր ,
թէ քա՞ հինգ հացիւ , հինգ հազար մարդ
կշտացոյց յանապատին . սխալեցաւ և ա-
սաց , թէ քա՞ հինգ հազար հացիւ , հինգ
քաղցած մարդ կշտացոյց։

Յայն ժամանակն ոմանք տեղեակ ան-
ձինք , որ անդ նստեալ էին , և այս քարոզին

կանչ դնէին, սկսան ծիծաղել. և մինն 'ի
նոցանէ համարձակեցաւ և ասաց. հայր
աբ, շատ զարմանալի բան. աղէկ որ այդ
մարդիկն չի ճաթեցան։ Յայնժամ ասէ
տգէտ քարոզիչն. այ որդեակ, ահա այս է
զարմանալի հրաշքն. որ այս մարդիկն շատ
կերան. և քի մեծ զօրութեն չի ճաթեցան։
Ցուցանէ առակս. թէ տգիտութիւն էր
բեւեռն անմեղադրելի առնէ զսխալել մարդն,
թէ աշխարհական լինի այն, և թէ եկե-
ղեցական։

166 Նապարծ իտալացի մի՝ որ եկեալ
էր 'ի կոստանդնուպօլիս, ուր և լինէր՝ չա-
փազանց պատմուխս առնէր։ Եւ յաւուր
միում նստեալ էր 'ի պանդոկ մի 'ի մանչլիս.
և ասաց անդ նստողաց. թէ 'ի մեր երկիրն
այնպէս մեծ և անճոռնի քաղաք մի բու-
սեալ կայ, որ հարիւրաւոր անձինք կարեն
նստիլ ընդ հովանեաւ նորա։
Յայն ժամանակն ասէ ցնա մշեցի ոմն,
թէ յերկիրն մեր՝ 'ի վանքն աբ կարապե-
տի, այնպէս մեծ և ահագին խալկին մի
կայ, որ զայս պանդոկն կարէ առնուլ 'ի
մէջ իւր։

[8 հ.]

A/835

Յայնժամ ասաց ցնա խուսալացին . ով մարդ զինչ ասես . շինովի՞ է այդ խօսքդ . ինչ քանի՞ էր պէտք այդպիսի մեծ խալ-կին , ընդէ՞ր շինեալ են զայդ .

Պատասխանի՝ ետ մշեցին և ասէ , վասն այն շինեալ են զայն խալկինն՝ զիրգքո մեծ քալամն եփեսցեն 'ի մէջ նը ։

Յուցանէ առակս . թէ անապարծ մարդիկ ուր և գտանիցին , իւրեանց անձուն-ի խօսիւքն խայտառակ և ափիբերան լինին առաջի հանճարեղ անձանց ։

Վերջ բարոյական առակաց ։

ԱՐՑԿ.ՍՍՈ ՊԻՏԻՔՅԱՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ